

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի խորհրդի 24/12/2019թ թիվ 47-Լ
որոշմամբ

Փոփոխված է

02/03/2020թ թիվ 7-Լ որոշմամբ

30/06/2020թ թիվ 23-Լ որոշմամբ

29/12/2020թ թիվ 46-Լ որոշմամբ

26/10/2021թ թիվ 38-Լ որոշմամբ

23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ

29/03/2022թ թիվ 7-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում
«15» ապրիլի 2022թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Մարտին Գալստյան

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի խորհրդի նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ)

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են՝

1) ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման կարգը, հիմքերը և պայմանները,

2) Ապահովագրողների և փորձագետների, Ապահովագրողների և վերանորոգող կազմակերպությունների միջև համագործակցության նվազագույն պահանջները, վերջինների հետ կնքման ենթակա պայմանագրերի (համաձայնագրերի) տիպային ձևերը կամ ըստ կիրառելիության՝ վերջինների գործունեությանը, որակավորմանը և մատուցվող ծառայություններին ներկայացվող պահանջները,

3) Փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների նվազագույն քանակը, որոնց հետ Ապահովագրողը պետք է ունենա մշտապես կնքված և գործող՝ սույն կանոնների պահանջներին համապատասխանող պայմանագրեր (համագործակցություն),

4) փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները և դրանց կիրառման կարգը:

2. Սույն կանոնները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական հետապնդման մարմինների և ավտոտրանսպորտային միջոցների մասնակցությամբ պատահարների գծով վարչական վարույթ իրականացնող մարմինների վրա: Սույն կետով նախատեսված մարմինները սույն կանոնների ուժով համարվում են Բյուրոյի կողմից տրամադրված՝ ԱՊՊԱ պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու որակավորում ունեցող անձինք և ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում իրավունք ունեն իրականացնելու ցանկացած տեսակի ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձաքննություն:

**ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **Օրենք՝** «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

2) **Բյուրո՝** Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո,

3) **Ապահովագրող՝** Բյուրոյին անդամակցող և ԱՊՊԱ պայմանագրի կնքման իրավունք ունեցող ապահովագրական ընկերություն,

4) **շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ՝** սույն կանոնների համաձայն՝ շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետի որակավորում ունեցող անձ,

5) **անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ՝** սույն կանոնների համաձայն՝ անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետի որակավորում ունեցող անձ,

6) **վնասների փորձագետ՝** շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ և անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ,

7) **պատճառների փորձագետ**՝ սույն կանոնների համաձայն՝ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորում ունեցող իրավաբանական անձ, ինչպես նաև «ավտոտեխնիկ», «նյութագետ» և (կամ) «հետքաբան» մասնագիտացումներով կամ դրանիցից որևէ մեկով սույն կանոնների համաձայն որակավորված ֆիզիկական անձ,

8) **փորձագետ**՝ վնասների փորձագետ և պատճառների փորձագետ,

9) **վերանորոգող կազմակերպություն**՝ ապահովագրական հատուցման գործընթացի շրջանակներում ԱՊՊԱ պատահարի հետևանքով գույքին պատճառված վնասների վերականգնում իրականացնող անձ,

10) **ֆիզիկական անձ**՝ ֆիզիկական անձ՝ բացառությամբ ֆիզիկական անձ անհատ ձեռնարկատերի: Անհատ ձեռնարկատերերի նկատմամբ տարածվում են իրավաբանական անձանց համար սահմանված կարգավորումները,

11) **ղեկավար**՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, (լրաց. է 30/06/2020թ թիվ 23-Լ)

12) **փոխկապակցված անձ**՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված նշանակության: (լրաց. է 30/06/2020թ թիվ 23-Լ)

4. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 3. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՏՐՎՈՂ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. ԱՊՊԱ ոլորտում տրվում են փորձագետների հետևյալ տեսակի որակավորումները՝ հետևյալ իրավասություններով՝

Աղյուսակ 1

N	ԱՊՊԱ ոլորտում փորձագետների որակավորման տեսակները	Որակավորմամբ տրվող իրավասությունները
1	Շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ	ԱՊՊԱ ոլորտում անշարժ գույքից բացի ցանկացած այլ գույքին պատճառված վնասների գնահատում
2	Անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ	ԱՊՊԱ ոլորտում անշարժ գույքին պատճառված վնասների գնահատում
3	Պատահարի առաջացման պատճառների փորձագետ իրավաբանական անձ պատահարի առաջացման	ԱՊՊԱ ոլորտում Բյուրոյի կանոններով սահմանված ստանդարտ հատուցման գործընթացում պատահարի առաջացման պատճառների փորձաքննության

<p>փորձագետ ֆիզիկական անձ՝ «ավտոտեխնիկ», «նյութագետ» և (կամ) «հետքաբան» մասնագիտացումներից որևէ մեկով կամ մի քանիսով</p>	<p>իրականացում (պատահարի առկայության, մեխանիզմի և դրանում մեղավորության որոշում)</p>
--	--

**ԳԼՈՒԽ 4. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

6. ԱՊՊԱ ոլորտում գույքին պատճառված վնասների գնահատում կարող են իրականացնել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձ համարվող վնասների փորձագետները, իսկ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն՝ միայն իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետները: Ֆիզիկական անձ համարվող պատճառների փորձագետներն ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն կարող են իրականացնել միայն իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի կազմում և Բյուրոյի՝ պատճառների փորձաքննության գործընթացը կարգավորող կանոնների իմաստով չեն համարվում առանձին որակավորում ունեցող անձինք:

7. Փորձագետը կարող է ԱՊՊԱ ոլորտում իրականացնել փորձաքննություն հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1) ունի սույն կանոններով սահմանված կարգով ստացված համապատասխան տեսակի որակավորում,

2) Հայաստանի Հանրապետությունում գրանցված որևէ ապահովագրական ընկերության հետ ունի կնքված և գործող իր կողմից ԱՊՊԱ ոլորտում տրվող բոլոր փորձաքննություններից բխող պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր), որը (որոնք) բավարարում են սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված համաձայնագրում նշված պահանջներին (սույն ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում ֆիզիկական անձ համարվող պատճառների փորձագետների նկատմամբ),

3) փորձաքննության պատվեր տված Ապահովագրողի (Բյուրոյի) հետ ունի սույն կանոններով սահմանված տիպային օրինակին համապատասխան կնքված և գործող համաձայնագիր (սույն ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում ֆիզիկական անձ համարվող պատճառների փորձագետների նկատմամբ),

4) սույն կետի 3-րդ ենթակետի համաձայն կնքված պատշաճ համաձայնագրի շրջանակներում Ապահովագրողի (Բյուրոյի) կողմից Բյուրոյի կանոններով սահմանված կարգով ստացել է համապատասխան պատվեր (սույն ենթակետով սահմանված պահանջը չի տարածվում ֆիզիկական անձ համարվող պատճառների փորձագետների նկատմամբ),

5) փոխկապակցված չէ պատվիրված փորձաքննությանը որևէ առնչություն ունեցող անձի (պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցի վարորդ կամ սեփականատեր, տուժող, պատահարից բխող հատուցման գործընթացում ներգրավված

կամ ներգրավման ենթակա Ապահովագրող և այլն) հետ, (փոփ. և լրաց. է 30/06/2020թ թիվ 23-Լ)

6) (Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):

ԳԼՈՒԽ 5. ՓՈՐՃԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

8. Փորձագետի որակավորում ստանալու համար Բյուրո է ներկայացվում սույն կանոնների Հավելված 1-ով սահմանված ձևով դիմում: Անձը պատասխանատվություն է կրում սույն կետով նախատեսված դիմումի մեջ արտացոլված տեղեկություններն իրականությանը համապատասխանելու համար:

9. Փորձագետի որակավորման գործընթաց անցնելու համար որակավորման համար դիմած անձը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝ համապատասխանաբար դիմումին և դիմողի անձը հաստատող փաստաթղթին (իրավաբանական անձի դեպքում՝ նաև (ըստ կիրառելիության) ՀՎՀՀ-ն պարունակող փաստաթղթին, կանոնադրությանը և դիմողի անունից հանդես գալու իրավասությունը հավաստող փաստաթղթին) կցելով հետևյալ հիմնավորող փաստաթղթերի պատճենը կամ լուսապատճենը (անհրաժեշտության դեպքում, փաստաթղթի իսկությունն ստուգելու նպատակով, Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկը կարող է պահանջել և ստուգել ներկայացված փաստաթղթի բնօրինակը)՝

Աղյուսակ 2.1		
Որակավորման տեսակը՝ շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ և անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ		
Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր		
<i>Որակավորվող անձի տեսակը</i>	<i>Պահանջի նկարագրությունը</i>	<i>Հիմնավորող փաստաթուղթը</i>
Ֆիզիկական անձ	1. Բարձրագույն կրթություն	Դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ
	2. Գույքային վնասի գնահատման բնագավառում կամ դրան հարակից բնագավառներում համապատասխան	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման

	<p>գիտելիքներ և որակավորում</p>	<p>հանձնաժողովի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված փորձագետի (դատական փորձագետի) վկայական՝ Ապրանքագիտություն փորձագիտական մասնագիտությամբ, կամ համապատասխան որակավորում տվող օտարերկրյա հեղինակավոր հաստատության կողմից տրված նմանատիպ փաստաթուղթ</p> <p>կամ</p> <p>Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության պետական նմուշի ավարտական փաստաթուղթ կամ օտարերկրյա կրթական հաստատության Հայաստանի Հանրապետությունում փոխճանաչված համապատասխան փաստաթուղթ՝ շուկայագիտություն և ճարտարագիտություն ուղղվածությամբ</p>
--	---------------------------------	--

		<p>մասնագիտություններից որևէ մեկի գծով</p> <p>կամ</p> <p>Ապահովագրական ընկերության համար կամ իրավաբանական անձ համարվող վնասների փորձագետի կազմում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երկու տարվա վնասների փորձագետի աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթ</p>
	<p>3. Վերջին հինգ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունում կամ գնահատման գործունեությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա գնահատում իրականացնելու աշխատանքային փորձ</p>	<p>Համապատասխան կազմակերպության հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիրը</p>
	<p>4. ՀՀ տարածքում անշարժ գույքի գնահատում իրականացնելու իրավունք <i>(կիրառելի է միայն անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետների համար)</i></p>	<p>ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից տրված անշարժ գույքի գնահատման որակավորման վկայական կամ թույլտվությունը հավաստող այլ փաստաթուղթ (ՀՀ օրենսդրությամբ նման փաստաթուղթ նախատեսված լինելու դեպքում)</p>

	<p>5. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն (որակավորման փուլում ենթակա է հիմնավորման՝ Բյուրոյի պահանջով)</p>	<p>Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի և նրա նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>
<p>Իրավաբանական անձ</p>	<p>1. Շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետի որակավորում ունեցող առնվազն երկու աշխատող և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ կամ անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետի որակավորում ունեցող առնվազն մեկ աշխատող և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ (ըստ դիմումով ակնկալվող որակավորման տեսակի)</p>	<p>Համապատասխան աշխատողների ֆիզիկական անձանց հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրեր</p>
	<p>2. ՀՀ տարածքում անշարժ գույքի գնահատում իրականացնելու իրավունք (միայն անշարժ գույքի</p>	<p>ՀՀ իրավասու պետական մարմնի կողմից տրված անշարժ գույքի գնահատման արտոնագիր կամ թույլտվությունը հավաստող</p>

	վնասներ գնահատող փորձագետների համար)	այլ փաստաթուղթ (ՀՀ օրենսդրությամբ նման փաստաթուղթ նախատեսված լինելու դեպքում)
	<p>3. Այլ իրավաբանական անձ համարվող վնասների փորձագետների հետ փոխկապակցվածության բացակայություն, ինչպես նաև որակավորման համար դիմած անձի ղեկավարը և բոլոր ֆիզիկական անձ փորձագետներն աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ չեն գտնվում որևէ վնասների փորձագետի հետ <i>(փոփ. է 30/06/2020թ թիվ 23-Լ)</i></p>	<p>Որակավորման համար դիմած անձի կողմից տրված հայտարարություն՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1.1-ի</p>
	<p>4. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն</p>	<p>Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի, նրա ղեկավարի, ֆիզիկական անձ փորձագետների և նրանց նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>

Որակավորման տեսակը՝ ավտոտեխնիկ մասնագիտացմամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետ		
Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր		
Որակավորվող անձի տեսակը	Պահանջի նկարագրությունը	Հիմնավորող փաստաթուղթը
Ֆիզիկական անձ	1. Բարձրագույն կրթություն	Դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ
	2. Պատահարի առաջացման պատճառների փորձաքննության բնագավառում ավտոտեխնիկ մասնագիտացմամբ համապատասխան գիտելիքներ և որակավորում	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված փորձագետի (դատական փորձագետի) վկայական՝ Ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքների հետազոտություն, Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի հետազոտություն և Տրանսպորտային հետքաբանական հետազոտություն փորձագիտական

մասնագիտություններով
միաժամանակ կամ
համապատասխան
որակավորում տվող
օտարերկրյա հեղինակավոր
հաստատության կողմից
տրված նմանատիպ
փաստաթուղթ,

կամ

Հայաստանի
Հանրապետության կամ
Արցախի Հանրապետության
պետական կամ
հավատարմագրված ոչ
պետական բարձրագույն
ուսումնական
հաստատության կողմից
տրված պետական նմուշի
ավարտական փաստաթուղթ
կամ օտարերկրյա կրթական
հաստատության Հայաստանի
Հանրապետությունում
փոխճանաչված
համապատասխան
փաստաթուղթ՝ մետալուրգիա
և մեքենաշինություն,
ցամաքային և օդային
փոխադրամիջոցներ
ուղղվածությամբ
մասնագիտություններից որևէ
մեկի գծով, բացառությամբ
ավիացիոն և հրթիռային
տեխնիկա,
զենիթահրթիռային
համալիրներ
մասնագիտացումներից

կամ

		<p>Իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի կազմում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երկու տարվա ավտոտեխնիկ մասնագիտացմամբ պատճառների փորձագետի աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթ</p>
	<p>3. Վերջին հինգ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունում կամ ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման պատճառների փորձաքննությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու աշխատանքային փորձ (3-րդ կետը լրաց. է 29/12/2020թ թիվ 46-Լ)</p>	<p>Համապատասխան կազմակերպության հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիր</p>
	<p>4. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն (որակավորման փուլում ենթակա է հիմնավորման՝ Բյուրոյի պահանջով)</p>	<p>Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին</p>

		համապատասխան՝ անձի և նրա նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա
Աղյուսակ 2.2.1		
Որակավորման տեսակը՝ նյութագետ մասնագիտացմամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետ		
Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր		
<i>Որակավորվող անձի տեսակը</i>	<i>Պահանջի նկարագրությունը</i>	<i>Հիմնավորող փաստաթուղթը</i>
<i>Ֆիզիկական անձ</i>	1. Բարձրագույն կրթություն	Դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ
	2. Պատահարի առաջացման պատճառների փորձաքննության բնագավառում նյութագետ մասնագիտացմամբ համապատասխան գիտելիքներ և որակավորում	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված փորձագետի (դատական փորձագետի) վկայական՝ հետազոտություն ֆիզիկական և քիմիական մեթոդներով

		<p>փորձագիտական մասնագիտությամբ, կամ համապատասխան որակավորում տվող օտարերկրյա հեղինակավոր հաստատության կողմից տրված նմանատիպ փաստաթուղթ</p> <p>կամ</p> <p>Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված պետական նմուշի ավարտական փաստաթուղթ կամ օտարերկրյա կրթական հաստատության Հայաստանի Հանրապետությունում փոխճանաչված համապատասխան փաստաթուղթ՝ քիմիա, քիմիական տեխնոլոգիա, ֆիզիկա և կենսաբանություն ուղղվածությամբ մասնագիտություններից որևէ մեկի գծով</p> <p>կամ</p> <p>Իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի կազմում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երկու տարվա նյութագետ մասնագիտացմամբ</p>
--	--	--

		<p>պատճառների փորձագետի աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթ</p>
	<p>3. Վերջին հինգ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունում կամ ճանապարհատրանսպորտային և պատահարների առաջացման պատճառների փորձաքննությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու աշխատանքային փորձ (3-րդ կետը լրաց. է 29/12/2020թ թիվ 46-Լ)</p>	<p>Համապատասխան կազմակերպության հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիր</p>
	<p>4. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն (որակավորման փուլում ենթակա է հիմնավորման՝ Բյուրոյի պահանջով)</p>	<p>Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի և նրա նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>
<p style="text-align: right;">Աղյուսակ 2.2.2</p>		

<p align="center">Որակավորման տեսակը՝ հետքաբան մասնագիտացմամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետ</p> <p align="center">Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր</p>		
<p><i>Որակավորվող անձի տեսակը</i></p>	<p><i>Պահանջի նկարագրությունը</i></p>	<p><i>Հիմնավորող փաստաթուղթը</i></p>
<p><i>Ֆիզիկական անձ</i></p>	<p>1. Բարձրագույն կրթություն</p>	<p>Դիպլոմ կամ պետական քննական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն ստացած լինելու փաստը հավաստող այլ փաստաթուղթ</p>
	<p>2. Պատահարի առաջացման պատճառների փորձաքննության բնագավառում հետքաբան մասնագիտացմամբ համապատասխան գիտելիքներ և որակավորում</p>	<p>Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կամ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված փորձագետի (դատական փորձագետի) վկայական՝ հետքաբանություն փորձագիտական մասնագիտությամբ, կամ համապատասխան որակավորում տվող օտարերկրյա հեղինակավոր հաստատության կողմից տրված նմանատիպ փաստաթուղթ</p> <p align="center">կամ</p>

		<p>Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված պետական նմուշի ավարտական փաստաթուղթ կամ օտարերկրյա կրթական հաստատության Հայաստանի Հանրապետությունում փոխճանաչված համապատասխան փաստաթուղթ՝ իրավունք, միջոլորտային մասնագիտություններ և ֆիզիկա ուղղվածությամբ մասնագիտություններից որևէ մեկի գծով</p> <p>կամ</p> <p>Իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի կազմում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երկու տարվա հետքաբան մասնագիտացմամբ պատճառների փորձագետի աշխատանքային փորձը հավաստող փաստաթուղթ</p>
	<p>3. Վերջին հինգ տարվա ընթացքում ապահովագրական ընկերությունում կամ ճանապարհատրանսպորտային պատահարների</p>	<p>Համապատասխան կազմակերպության հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագիր</p>

	<p>առաջացման պատճառների փորձաքննությամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունում առնվազն մեկ տարվա պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու աշխատանքային փորձ (3-րդ կետը լրաց. է 29/12/2020թ թիվ 46-Լ)</p>	
	<p>4. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն (որակավորման փուլում ենթակա է հիմնավորման՝ Բյուրոյի պահանջով)</p>	<p>Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի և նրա նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության, փաստաթղթերի և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>
Աղյուսակ 2.2.3		
Որակավորման տեսակը՝ պատահարի առաջացման պատճառների փորձագետ		
Պահանջներ և այն հիմնավորող՝ դիմումին կցվող փաստաթղթեր		
Որակավորվող անձի տեսակը	Պահանջի նկարագրությունը	Հիմնավորող փաստաթուղթը

<p>Իրավաբանական անձ</p>	<p>1. Պատճառների փորձագետի համապատասխան որակավորում ունեցող՝ սույն կանոնների 7-րդ կետով սահմանված պահանջներին բավարարող առնվազն երեք աշխատող և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ, որոնցից առնվազն երկուսը պետք է ունենան ավտոտեխնիկի մասնագիտացում և առնվազն մեկական փորձագետ պետք է ունենան հետքաբանի և նյութաբանի մասնագիտացում</p>	<p>Համապատասխան անձանց հետ կնքված աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական պայմանագրեր և այդ անձանց գրավոր հայտարարությունները՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1.2-ի</p>
	<p>2. Ճանապարհատրանսպորտային պատահարների համար Բյուրոյի կանոնների համաձայն հավաքագրվող ելակետային տվյալների հիման վրա վթարի մեխանիզմը վերականգնելու՝ միջազգայնորեն ճանաչված ծրագրի առկայություն և այդ ծրագիրն օգտագործելու թույլտվություն</p>	<p>Համապատասխան թույլտվություն (լիցենզիա), ինչպես նաև տեղեկանք, որում նկարագրվում է ծրագրային համակարգի աշխատանքի մեխանիզմը և համաձայնություն է տրվում առ այն, որ Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկը ցանկացած ժամանակ կարող է ստուգել տեղեկանքում նշված մեխանիզմով ծրագրային համակարգի աշխատանքը</p>

	<p>3. Իրավաբանական անձի աշխատող կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ավտոտեխնիկ մասնագիտացմամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետների կողմից ճանապարհատրանսպորտային պատահարների համար հավաքագրվող ելակետային տվյալների հիման վրա վթարի մեխանիզմը վերականգնելու համար տվյալ կազմակերպության կողմից կիրառվելիք ծրագրին պատշաճ տիրապետում</p>	<p>Հատուկ այդ նպատակով Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից ստեղծված աշխատանքային խմբի կողմից համապատասխան անձանց տրված դրական եզրակացություն, որը տրամադրվում է ԱՊՊԱ ոլորտում գրանցված որևէ պատահարի (որի գծով առկա է պատահարի ամբողջական տեսագրություն) ելակետային տվյալների հիման վրա նրանց կողմից ծրագրի միջոցով վերարտադրված (ստացված) վթարի մեխանիզմը տեսագրության հետ համադրելու արդյունքում</p>
	<p>4. Այլ իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետների հետ փոխկապակցվածության բացակայություն, ինչպես նաև որակավորման համար դիմած անձի ղեկավարը և բոլոր ֆիզիկական անձ փորձագետներն աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ չեն գտնվում որևէ Ապահովագրողի, Բյուրոյի և պատճառների փորձագետի հետ</p>	<p>Որակավորման համար դիմած անձի կողմից տրված հայտարարություն՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1.1-ի</p>
	<p>5. Փորձագետների անկախության ապահովման և աշխատանքի արդյունավետ</p>	<p>Իրավաբանական անձի ներքին իրավական ակտեր, որոնցով կարգավորվում են համապատասխան հարցերը</p>

	<p>կազմակերպման սկզբունքների և դիսկերի կառավարման ներքին համակարգերի առկայություն</p>	
	<p>6. Բարեվարքության պահանջներին համապատասխանություն</p>	<p>Բյուրոյի կազմում ստեղծված կարգապահական հանձնաժողովի դրական եզրակացություն, որը տրվում է «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով սահմանված դրույթներին համապատասխան՝ անձի, նրա ղեկավարի ֆիզիկական անձ փորձագետների և նրանց նախորդող վարքագծի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության և, ըստ անհրաժեշտության, իրականացված հարցազրույցի հիման վրա</p>

10. Որակավորման համար դիմումը և սահմանված պահանջներին բավարարելու փաստը հավաստող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն կանոնների 14-րդ կետով նախատեսված դեպքերի, Բյուրոն կազմակերպում է աղյուսակ 3-ով նախատեսված գործողությունները, որոնց դրական արդյունքի դեպքում անձը համարվում է Բյուրոյի խորհրդի կողմից համապատասխան տեսակի որակավորումն ստացած:

Աղյուսակ 3

N	Որակավորման տեսակը	Որակավորման գործընթացը		Դրական համարվող արդյունքը
1	Շարժական գույքի վնասներ գնահատող փորձագետ և	Ֆիզիկական անձանց համար	Աղյուսակ 2.1-ով համապատասխան որակավորման տեսակի համար սահմանված պահանջների	Սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ Բյուրոյի կողմից

	անշարժ գույքի վնասներ գնահատող փորձագետ		համապատասխանության ստուգում	տրված դրական եզրակացություն
		Իրավաբանական անձանց համար	Հավելված 3-ով սահմանված թեմաներով իրավաբանական անձի ղեկավարի (անհատ ձեռնարկատիրոջ կամ վերջինի մոտ ղեկավարի պարտականություններն իրականացնող անձի) հարցազրույց Բյուրոյի խորհրդի նիստում	Բյուրոյի խորհրդի դրական որոշում
1	Պատահարի առաջացման պատճառների փորձագետ	Ֆիզիկական անձ	Աղյուսակ 2.2.1-ով և 2.2.2-ով համապատասխան որակավորման տեսակի համար սահմանված պահանջների համապատասխանություն	Սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ Բյուրոյի կողմից տրված դրական եզրակացություն
		Իրավաբանական անձ	Հավելված 3-ով սահմանված թեմաներով իրավաբանական անձի ղեկավարի (անհատ ձեռնարկատիրոջ կամ վերջինի մոտ ղեկավարի պարտականություններն իրականացնող անձի) հարցազրույց Բյուրոյի խորհրդի նիստում	Բյուրոյի խորհրդի դրական որոշում

11. Փորձագետի որակավորումը տրվում է ֆիզիկական անձանց համար՝ երեք տարի ժամկետով, իսկ իրավաբանական անձանց համար՝ անժամկետ:

12. Սույն կանոններով նախատեսված կարգով անձին որակավորելուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոն որակավորված անձի էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում որակավորման վկայականի էլեկտրոնային տարբերակը, ինչպես նաև իր պաշտոնական ինտերնետային կայքի «Փորձագետներ» բաժնում հրապարակում է որակավորված անձի անունը, ազգանունը (անվանումը) և որակավորման տեսակը: Ընդ որում, անձին տրված որակավորումը հավաստվում է նշված տեղեկատվության հրապարակմամբ:

13. Որակավորման համար դիմած և սույն կանոններով սահմանված կարգով դրական արդյունքներ չապահովված անձանց ծանուցվում է դիմումը մերժելու մասին՝ ֆիզիկական անձանց մասով՝ Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից տրված բացասական եզրակացությունը, իսկ իրավաբանական անձանց մասով՝ Բյուրոյի խորհրդի բացասական որոշումը ծանուցելու միջոցով:

14. Բյուրոն, առանց աղյուսակ 3-ով նախատեսված գործողությունները կազմակերպելու, համապատասխան գրությամբ մերժում է անձին որակավորման տրամադրումը, եթե՝

1) դիմումը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում արտացոլված տվյալները լիարժեք, արժանահավատ կամ ամբողջական չեն կամ չեն համապատասխանում սույն կանոններով նախատեսված պահանջներին (իրավաբանական անձ դիմումատուների մասով),

2) անձը սույն կանոնների 13-րդ կետի համաձայն իրավունք չուներ դիմել որակավորման համար,

3) անձը դիմելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում զրկվել է Բյուրոյի կողմից տրված որևէ տեսակի որակավորումից,

4) նա չի մասնակցել հարցազրույցին:

ԳԼՈՒԽ 6. ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ

15. Ապահովագրողները և Բյուրոն իրենց հետ համագործակցող՝ վնասների փորձագետների հետ պետք է ունենան վերջինների հետ կնքված պայմանագրի (աշխատանքային կամ ծառայությունների մատուցման) մաս հանդիսացող գործող համաձայնագիր, համապատասխանաբար՝

1) Հավելված 4.1-ով սահմանված ձևով՝ ֆիզիկական անձ փորձագետների հետ կնքված պայմանագրերի մասով, կամ,

2) Հավելված 4.2-ով սահմանված ձևով՝ իրավաբանական անձ փորձագետների հետ կնքված պայմանագրերի մասով:

16. Իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի որակավորում ստացած անձն որակավորումն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, սույն կանոնների Հավելված 2-ով սահմանված ձևին համապատասխան Բյուրոյին և Ապահովագրողներին միաժամանակ ներկայացնում է իր կողմից մատուցվող ծառայությունների գնային հրապարակային առաջարկը, իսկ դրանցում փոփոխություններ իրականացվելու դեպքերում՝ փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթվից առնվազն 10 օր առաջ այդ փոփոխությունների մասին միաժամանակ տեղեկացնում է Բյուրոյին և բոլոր Ապահովագրողներին: Ընդ որում սույն կետով նախատեսված առաջարկը՝

1) պետք է միևնույնը լինի բոլոր Ապահովագրողների համար,

2) Բյուրոյին և Ապահովագրողներին ներկայացնելուց (սահմանված կարգով ծանուցված փոփոխությունների ուժի մեջ մտնելուց) հետո՝ տվյալ փորձագետին Բյուրոյի կանոնների համաձայն ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման փորձաքննության իրականացման պատվեր ցանկացած եղանակով ներկայացվելու դեպքում համարվում է, որ պատճառների փորձագետը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 454-րդ հոդվածի համաձայն՝ ստացել է Բյուրոյի և Ապահովագրողների ակցեպտը, և նրանց միջև կնքվել է (փոփոխվել է) ԱՊՊԱ

պատահարի առաջացման պատճառների փորձաքննության իրականացման ծառայությունների մատուցման պայմանագիր (պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիր)՝ համապատասխան գնացուցակով և սույն կանոնների 4.3-րդ հավելվածում նշված իրավունքներով և պարտավորություններով: Փորձագետը պարտավոր է Բյուրոյի և Ապահովագրողների հետ հարաբերություններում ԱՊՊԱ պատահարների առաջացման փորձաքննության ծառայությունների մատուցման ժամանակ կիրառել սույն կետի համաձայն ներկայացված (փոփոխված) միևնույն գնային առաջարկը,

3) պետք է կլորացված լինի մինչև մեկ հազար ՀՀ դրամը: *(լրաց. է 30/06/2020թ թիվ 23-Լ)*

16.1. Ապահովագրողի (Բյուրոյի) կողմից պատահարի առաջացման պատճառների փորձաքննության գծով պատվեր չի կարող տրվել իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետին, եթե տվյալ պատվերի տրամադրմամբ պատվերի ներկայացմանը նախորդող երեսուն օրվա ընթացքում տվյալ Ապահովագրողի (Բյուրոյի) կողմից տվյալ իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետին ներկայացված պատվերների քանակը կգերազանցի նույն ժամանակահատվածում իր կողմից նշանակված պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունների պատվերների ընդհանուր քանակի 35 տոկոսը:

17. Բյուրոն և Ապահովագրողները պարտավոր են սույն կանոններին համապատասխան համագործակցել առնվազն 2 շաբաթական գույքի վնասներ գնահատող փորձագետի և առնվազն 1 անշաբաթ գույքի վնասներ գնահատող փորձագետի հետ:

18. Բյուրոն կրկնակի փորձաքննություն նշանակելիս փորձաքննության պատվերը չի կարող տալ այնպիսի փորձագետի, որի գծով առկա է հետևյալ հանգամանքներից որևէ մեկը.

1) տվյալ փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունների գծով վերջին մեկ տարվա ընթացքում ավելի քան երեք անգամ նշանակվել է ստուգիչ փորձաքննություն, որոնցից առնվազն 1/2-ով արձանագրվել է տվյալ փորձագիտական կազմակերպության եզրակացության մեջ «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից իրականացվող վերահսկողության» RL 1-004 կանոններով նախատեսված շեղումներից որևէ մեկի առկայությունը, կամ

(սույն ենթակետով նախատեսված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրառվելի):

2) տվյալ փորձագետը գրավոր պարտավորություն չի ստանձնել առ այն, որ այսուհետ ձեռնպահ է մնալու տվյալ տեսակի (պատահարի առաջացման պատճառների կամ գույքին պատճառված վնասների) առաջնային փորձաքննություն իրականացնելուց կամ պարտավորություն ստանձնելուց հետո փաստացի իրականացրել է այդպիսի փորձաքննություն՝ ներառյալ պարտավորության դադարեցման միջոցով: Սույն ենթակետի համաձայն՝ փորձագետի կողմից ստանձնած պարտավորությունը նրա կողմից միակողմանիորեն կարող է դադարեցվել այդ մասին Բյուրոյին ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելու պայմանով: *(լրաց. է 30/06/2020թ թիվ 23-Լ և փոփ. և լրաց. է 23/12/2021թ թիվ 48-Լ և 29/03/2022թ թիվ 7-Լ)*

19. Փորձաքննության պատվեր ներկայացրած, ինչպես նաև ինքնաշխատ պատվերով սույն կանոններով սահմանված կարգով վճարման պարտավորություն ունեցող Ապահովագրողները և Բյուրոն պարտավոր են փորձագետի կողմից Բյուրոյի կանոնների համաձայն տրված փորձագիտական եզրակացությունների դիմաց (ներառյալ՝ հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտություն կատարելու առաջադրանքի գծով, որի համար Բյուրոյի կանոնների համաձայն՝ տրվել է անհնարինության մասին գրավոր պատասխան, սակայն իրականացվել է պատահարում ներգրավված առնվազն մեկ ավտոտրանսպորտային միջոցի զննություն) վճարել սույն կանոններով նախատեսված համապատասխան գնացուցակով նախատեսված ծառայության վճարն ոչ ուշ, քան վերջինի կողմից դուրս գրված հարկային հաշվի ամսաթվին հաջորդող ամսվա երրորդ աշխատանքային օրը: (լրաց. է 29/12/2020թ թիվ 46-Լ)

20. Ապահովագրողները և Բյուրոն պատասխանատվություն են կրում իրենց հետ համագործակցող փորձագետների հետ՝ սույն կանոնների 15-րդ կետով նախատեսված՝ համապատասխան պայմանագրերի և համաձայնագրերի կնքման ապահովման գործընթացի համար և համապատասխանաբար դրա չկնքման կամ նշված պահանջներին չհամապատասխանող համաձայնագրերի կնքման հետևանքով, ինչպես նաև մատուցված ծառայությունների դիմաց սույն կանոնների 18-րդ կետով սահմանված կարգով և չափով վճարումների չկատարման հետևանքով առաջացող բացասական հետևանքների ռիսկերը՝ ներառյալ ֆինանսական ռիսկերը:

21. Փորձագետները սույն կանոններով նախատեսված կարգով որակավորման դիմում ներկայացնելու և որակավորումն ստանալու ուժով պարտավորություն են ստանձնում մշտապես համապատասխանել սույն կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին և լիակատար պատասխանատվություն են կրում սույն կանոններով, Բյուրոյի այլ կանոններով, ինչպես նաև սույն կանոնների համաձայն՝ իրենց հետ կնքված համաձայնագրերով կամ իրենց կողմից ստանձնած գրավոր պարտավորություններով իրենց գործունեությանը ներկայացված պահանջների պահպանման և համապատասխանաբար դրա չպահպանման արդյունքում պատճառված վնասների հատուցման համար: Փորձագետները սույն կետով նախատեսված պատասխանատվությունը (Բյուրոյի կանոններով սահմանված պահանջների և դրույթների պահպանման) կրում են ինչպես Ապահովագրողների և Բյուրոյի, այնպես էլ ՀՀ դատարանների և ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ԱՊՊԱ ոլորտում պատվիրված փորձաքննությունների իրականացման և ցանկացած այլ տիպի բանավոր կամ գրավոր կարծիքի տրամադրման գործընթացում: (լրաց է 29/03/2022թ թիվ 7-Լ)

ԲԱԺԻՆ 3. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 7. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՄԲ ՏՐՎՈՂ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Բյուրոյի կողմից տրվում է վերանորոգող կազմակերպության միայն մեկ տեսակի որակավորում՝ ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգում իրականացնող կազմակերպության որակավորում, որը տալիս է ապահովագրական հատուցման

գործընթացի շրջանակներում ԱՊՊԱ պատահարի հետևանքով ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված ցանկացած վնասի վերականգնման իրավասություն: ԱՊՊԱ պատահարի հետևանքով այլ գույքին պատճառված վնասների վերականգնում իրականացնելու համար անձը ենթակա է Բյուրոյի կողմից որակավորման:

ԳԼՈՒԽ 8. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

23. Վերանորոգող կազմակերպություն կարող են լինել միայն իրավաբանական անձինք:

24. Անձը կարող է ապահովագրական հատուցման գործընթացի շրջանակներում ԱՊՊԱ պատահարի հետևանքով գույքին պատճառված վնասների վերականգնում իրականացնել հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1) ունի սույն կանոններով սահմանված կարգով ստացված համապատասխան տեսակի որակավորում (սույն կանոնների համաձայն նման որակավորում պահանջվելու դեպքում),

2) ունի համապատասխան գույքի վերականգնում իրականացնելու արտոնագիր կամ լիցենզիա (համապատասխան գործունեությունը ՀՀ օրենսդրության համաձայն՝ արտոնագրման կամ լիցենզավորման ենթակա լինելու դեպքում),

3) Հայաստանի Հանրապետությունում գրանցված որևէ ապահովագրական ընկերության հետ ունի կնքված և գործող՝ իր կողմից ԱՊՊԱ ոլորտում իրականացվող բոլոր վերանորոգման աշխատանքներից բխող պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր), որը (որոնք) բավարարում են սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված պայմանագրում նշված պահանջներին,

4) վերանորոգման պատվեր տված Ապահովագրողի (Բյուրոյի) հետ ունի սույն կանոններով սահմանված տիպային օրինակին համապատասխան կնքված և գործող պայմանագիր,

5) Ապահովագրողից (Բյուրոյից) ստացել է կնքված պայմանագրին համապատասխան պատվեր:

ԳԼՈՒԽ 9. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

25. Վերանորոգող կազմակերպության որակավորում ստանալու համար Բյուրո է ներկայացվում սույն կանոնների Հավելված 1-ով սահմանված ձևով դիմում՝ կցելով որակավորում ստանալու համար սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարելու մասին տեղեկանք և գրավոր համաձայնություն՝ առ այն, որ Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկը ցանկացած ժամանակ կարող է ստուգել նշված պահանջների առկայությունը: Անձը պատասխանատվություն է կրում սույն կետով նախատեսված դիմումի մեջ արտացոլված տեղեկություններն իրականությանը համապատասխանելու համար:

26. Վերանորոգող կազմակերպության որակավորում ստանալու համար որակավորման համար դիմած անձը վերանորոգման գործունեության յուրաքանչյուր վայրի համար պետք է բավարարի հետևյալ տեխնիկական պահանջներին՝

1) շուրջօրյա և անվտանգ ավտոկայանատեղի՝ համապատասխան պահակային ծառայությամբ,

2) հատուկ առանձնացված տարածք՝ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցները ներկելու, քանդելու և հավաքելու համար,

3) պահեստային տարածք՝ նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներից ժամանակավոր հանված դետալները, հանգույցները և ագրեգատներն ապահով պահպանելու համար.

4) սարքավորում (ստենդ), որը համալրված է հիդրավլիկ և (կամ) մեխանիկական կերպով ավտոտրանսպորտային միջոցների կմախքը ձգելու համար հարմարանքով,

5) ներկման և չորացման խցիկ,

6) հեռախոսակապ:

27. Որակավորման համար դիմումը և սահմանված պահանջներին բավարարելու փաստը հավաստող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ սույն կանոնների 31-րդ կետով նախատեսված դեպքերի, Բյուրոն կազմակերպում է որակավորման դիմում ներկայացրած անձի տեխնիկական հագեցվածության ստուգում, որի արդյունքում դրական եզրակացություն կազմվելու դեպքում անձը համարվում է Բյուրոյի կողմից համապատասխան տեսակի որակավորումն ստացած:

28. Վերանորոգող կազմակերպության որակավորումը տրվում է անժամկետ:

29. Սույն կանոններով նախատեսված կարգով անձին որակավորելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոն որակավորված անձի էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկում որակավորման վկայականի էլեկտրոնային տարբերակը, ինչպես նաև իր պաշտոնական ինտերնետային կայքի «Վերանորոգող կազմակերպություններ» բաժնում հրապարակում է որակավորված անձի անունը, ազգանունը (անվանումը) և որակավորման տեսակը: Ընդ որում, անձին տրված որակավորումը հավաստվում է նշված տեղեկատվության հրապարակմամբ:

30. Որակավորման համար դիմած և սույն կանոններով սահմանված կարգով դրական արդյունքներ չապահոված անձանց ծանուցվում է դիմումը մերժելու մասին: Սույն կետի համաձայն որակավորման դիմումի մերժում ստացած անձինք մերժման որոշումը կայացվելու պահից սկսած մեկ ամսվա ընթացքում չեն կարող կրկին դիմել Բյուրո որևէ տեսակի որակավորում ստանալու համար:

31. Բյուրոն, առանց տեխնիկական պահանջների ստուգում կազմակերպելու, համապատասխան գրությամբ մերժում է անձին որակավորման տրամադրումը, եթե՝

1) դիմումը կամ դրան կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում արտացոլված տվյալները լիարժեք, արժանահավատ կամ ամբողջական չեն կամ չեն համապատասխանում սույն կանոններով նախատեսված պահանջներին,

2) անձը սույն կանոնների 30-րդ կետի համաձայն իրավունք չունեի որակավորման համար,

3) անձը դիմելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում զրկվել է Բյուրոյի կողմից տրված որևէ տեսակի որակավորումից:

**ԳԼՈՒԽ 10. ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

32. Վերանորոգող կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրերի տիպային օրինակները սահմանված են սույն կանոնների Հավելված 5-ով, համապատասխանաբար՝

1) Հավելված 5.1՝ ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգման պայմանագրերի տիպային օրինակ,

2) Հավելված 5.2՝ ավտոտրանսպորտային միջոցից բացի այլ գույքի վերանորոգման պայմանագրերի տիպային օրինակ:

33. Բյուրոն և Ապահովագրողները պարտավոր են ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգում իրականացնող առնվազն երեք վերանորոգող կազմակերպության հետ ունենալ սույն կանոններով սահմանված տիպային օրինակներին համապատասխան կնքված և գործող պայմանագրեր, որոնցով կծածկեն ԱՊՊԱ պատահարի հետևանքով ցանկացած տեսակի ավտոտրանսպորտային միջոցի պատճառված ցանկացած տեսակի վնասի վերանորոգման հնարավորությունը: Բյուրոն և Ապահովագրողները պարտավոր են տուժողի կողմից Բյուրոյի կանոնների համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցից բացի այլ գույքի պատճառված վնասի վերականգնման պահանջ ներկայացվելու դեպքում երկու օրվա ընթացքում տուժողի ընտրությանը ներկայացնելու համար ապահովել առնվազն երկու վերանորոգող կազմակերպությունից կազմված ցուցակ, ով սույն կանոնների համաձայն իրավունք ունի իրականացնել համապատասխան գույքի վերականգնումը:

34. Ապահովագրողները և Բյուրոն պարտավոր են իրենց պաշտոնական ինտերնետային կայքի առաջին էջի տեսանելի մասում հրապարակել իրենց հետ համագործակցող (գործող պայմանագիր ունեցող) վերանորոգող կազմակերպությունների վերաբերյալ առնվազն հետևյալ տվյալները՝

1) անունը ազգանունը կամ անվանումը,

2) վերանորոգող կազմակերպությանը պատվիրակված վնասի վերականգնման տեսակը,

3) պայմանագրի գործողության ժամկետը:

35. Ապահովագրողները և Բյուրոն պատասխանատվություն են կրում իրենց հետ համագործակցող վերանորոգող կազմակերպությունների հետ՝ սույն կանոններին համապատասխան պայմանագրերի կնքման ապահովման գործընթացի համար և համապատասխանաբար դրա չկնքման կամ սույն կանոնների պահանջներին չհամապատասխանող պայմանագրի կնքման հետևանքով բացասական հետևանքների ռիսկերը՝ ներառյալ ֆինանսական ռիսկերը:

36. Վերանորոգող կազմակերպությունները պարտավոր են մշտապես համապատասխանել սույն կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին և լիակատար պատասխանատվություն են կրում սույն կանոններով, Բյուրոյի այլ կանոններով, ինչպես նաև սույն կանոնների համաձայն՝ իրենց հետ կնքված պայմանագրերով իրենց գործունեությանը ներկայացված պահանջների պահպանման և համապատասխանաբար դրա չպահպանման արդյունքում պատճառված վնասների հատուցման համար:

ԲԱԺԻՆ 4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 11. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

37. Փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների կողմից որակավորումն ստանալու համար սահմանված պահանջների, ինչպես նաև Բյուրոյի կանոններով և դրանց համաձայն՝ իրենց հետ կնքված պայմանագրերով (համաձայնագրերով) իրենց գործունեությանը ներկայացված պահանջների պահպանման նկատմամբ Բյուրոյի կողմից վերահսկողություն իրականացվում է և համապատասխանաբար պատասխանատվության միջոցներ կիրառվում են Բյուրոյի կողմից վերահսկողության գործընթացը կարգավորող համապատասխան կանոններով սահմանված կարգով:

38. Պատասխանատվության միջոցներով չպայմանավորված՝ փորձագետի և վերանորոգող կազմակերպության որակավորումը դադարում է, եթե որակավորված անձը.

1) ներկայացրել է որակավորումը դադարեցնելու կամ Բյուրոյի՝ իր գործունեությանը վերաբերող կանոններում փոփոխություններին կամ լրացումներին համաձայն չլինելու վերաբերյալ դիմում,

2) մահացել է, ոչ վերակազմավորման հիմքով վերակազմակերպվել է կամ լուծարվել է:

3) Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):

4) Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):

5) Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):

6) Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 23/12/2021թ թիվ 48-Լ որոշմամբ):

7) ավելի քան երկու ամիս չունի սույն կանոններով սահմանված պահանջներին բավարարող նվազագույն քանակի աշխատող և (կամ) քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձ: (լրաց. է 29/03/2022թ թիվ 7-Լ)

ԲԱԺԻՆ 5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

39. Բյուրոն վարում է որակավորված և որակազրկված փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների, ինչպես նաև որակավորման համար դիմած, սակայն բացասական արդյունք ցուցաբերած անձանց ռեեստր:

40. Սույն կանոններով հաստատված տիպային օրինակներում նախատեսված դաշտերը ենթակա են պարտադիր լրացման: Ընդ որում՝ այդ տիպային օրինակներով նախատեսված պահանջները և գործողությունները պարտադիր են տիպային օրինակը կիրառող համապատասխան անձի (անձանց) համար:

41. Սույն կանոններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ որակավորում ունեցող փորձագետներն ու գրանցված վերանորոգող կազմակերպություններն ինքնաշխատ համարվում են սույն կանոններով նախատեսված համապատասխան որակավորում ստացած անձինք՝ սույն կանոններով սահմանված պայմաններով: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձանց՝ սույն կանոններով սահմանված որակավորման ժամկետը հաշվարկվում է իրենց կողմից փաստացի որակավորում ստանալու օրվանից:

42. Սույն կանոնների 41-րդ կետով նախատեսված անձանց հետ Բյուրոյի և Ապահովագրողների կնքած պայմանագրերը (համաձայնագրերը) սույն կանոններն ուժի

մեջ մտնելու օրվա դրությամբ պետք է համապատասխանեցված լինեն սույն կանոններով սահմանված պահանջներին՝ ներառյալ նրանց հետ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

43. 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորում ունեցող ֆիզիկական անձինք մինչև իրենց որակավորման ժամկետի ավարտը կամ Բյուրոյի կանոնների համաձայն՝ դրա վաղաժամկետ դադարեցումը համարվում են որակավորված միաժամանակ ավտոտեխնիկի, նյութագետի և հետքաբանի մասնագիտացմամբ:

44. 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորում ունեցող իրավաբանական անձանց նկատմամբ սույն կանոնների 9-րդ կետի աղյուսակ 2.2.3-ի 3-րդ կետով նախատեսված պահանջը տարածվում է 2020 թվականի հուլիսի 1-ից:

45. Սույն կանոնների 16-րդ կետով նախատեսված գնառաջարկ ներկայացնելու պահանջի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ԱՊՊԱ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորում ունեցող իրավաբանական անձինք պարտավոր են այդ պահանջի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ օրվա ընթացքում.

1) Բյուրո ներկայացնել սույն կանոնների 4.3-րդ հավելվածով սահմանված լրացուցիչ իրավունքների և պարտավորությունների հետ համաձայն լինելու վերաբերյալ հայտարարություն,

2) Բյուրոյին և բոլոր Ապահովագրողներին ուղարկել սույն կանոնների 16-րդ կետով նախատեսված գնառաջարկը: Ընդ որում սույն կետում նշված հայտարարության և գնառաջարկի ներկայացման պահին համապատասխան փորձագետների և Բյուրոյի և Ապահովագրողների միջև մինչև այդ կնքված ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման պատճառների փորձաքննության ծառայությունների մատուցման պայմանագրերը ենթակա են երկկողմանի համաձայնությամբ դադարեցման:

46. Սույն կանոնների 45-րդ կետով նախատեսված գործողությունները նույն կետով սահմանված ժամկետներում չկատարվելու դեպքում համապատասխան փորձագետի՝ ԱՊՊԱ պատահարի առաջացման պատճառների փորձագետի որակավորումը այդ ժամկետի ավարտի պահից համարվում է դադարած:

47. (Ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 29/03/2022թ թիվ 7-Լ որոշմամբ):

ՈՐԱՎԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄ

Դիմումի հասցեատերը		Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո
1. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐ		
Անուն, ազգանուն, հայրանուն (անվանում)		
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (ՀՎՀՀ)		
Պաշտոնական նամակագրության էլեկտրոնային փոստի հասցե		
2. ԴԻՄՈՒՄՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁԸ		
Խնդրում եմ ուսումնասիրել սույն դիմումով ներկայացված տվյալները և տրամադրել որակավորում, որպես՝		
<input type="checkbox"/>	Շարժական գույքի վնասներ գնահատող ֆիզիկական անձ փորձագետ	
<input type="checkbox"/>	Անշարժ գույքի վնասներ գնահատող ֆիզիկական անձ փորձագետ	
<input type="checkbox"/>	Շարժական գույքի վնասներ գնահատող իրավաբանական անձ փորձագետ	
<input type="checkbox"/>	Անշարժ գույքի վնասներ գնահատող իրավաբանական անձ փորձագետ	
<input type="checkbox"/>	Պատճառների իրավաբանական անձ փորձագետ	
<input type="checkbox"/>	Պատճառների ֆիզիկական անձ փորձագետ՝ ավտոտեխնիկ մասնագիտացմամբ	
<input type="checkbox"/>	Պատճառների ֆիզիկական անձ փորձագետ՝ նյութագետ մասնագիտացմամբ	
<input type="checkbox"/>	Պատճառների ֆիզիկական անձ փորձագետ՝ հետքաբան մասնագիտացմամբ	
<input type="checkbox"/>	Վերանորոգող կազմակերպություն	
3. ԴԻՄՈՒՄԻՆ ԿՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ		
h/h	Փաստաթղթի անվանումը	էջերի քանակը
1		
2		
...		
4. ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Սույն դիմումի ստորագրմամբ դիմումատուն՝		
4.1.	Հավաստում է, որ սույն դիմումով և կից փաստաթղթերով ներկայացված տվյալները և տեղեկությունները ճիշտ են և արժանահավատ, համապատասխանում են իրականությանը, և գիտակցում է, որ կեղծ կամ անարժանահավատ տեղեկություններ կամ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում սույն դիմումը կարող է մերժվել:	

4.2.	<p>Հավաստում է, որ բավարարում է դիմումով հայցվող որակավորում ստանալու համար Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներին՝ ներառյալ.</p> <ol style="list-style-type: none"> 1) անգործունակ կամ սահմանափակ գործունակ չէ, 2) դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չհանված դատվածություն, 3) օրինական ուժի մեջ մտած դատավճռով զրկված չէ ֆինանսական ոլորտում կամ փորձաքննության (դրա որևէ տեսակի) ոլորտում որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ տրանսպորտային միջոցների վերանորոգման գործունեությամբ զբաղվելու իրավունքից, 4) քրեական գործով ներգրավված չէ, որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ, 5) ճանաչված չէ սնանկ և չունի ժամկետանց պարտավորություններ: 			
4.3.	<p>Թույլատրում է, որպեսզի Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներին իր համապատասխանությունը՝ ներառյալ սույն դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունը, իսկ որակավորում ստանալուց հետո՝ նաև իր կողմից Բյուրոյի կանոններով սահմանված պարտականությունների պահպանումն ստուգելու նպատակով Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկն իրականացնի համապատասխան վերահսկողական միջոցառումներ՝ ներառյալ իր մոտ ստուգումներ և ուսումնասիրություններ և այլ անձանցից ու մարմիններից ստանա իր վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր:</p>			
4.4.	<p>Պարտավորվում է սույն դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և (կամ) տեղեկություններում ցանկացած փոփոխության կամ լրացման դեպքում 10-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Բյուրոյին:</p>			
4.5.	<p>Համաձայնություն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով իր նկատմամբ կիրառվեն կարգապահական պատասխանատվության (ներառյալ ֆինանսական բնույթի) միջոցներ՝ պարտավորվելով սահմանված կարգով կրել դրանք:</p>			
4.6.	<p>Ծանոթացել է Բյուրոյի «ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոնների Հավելված 4.3-ով սահմանված՝ ԱՊՊԱ ոլորտում պատճառների փորձագետի լրացուցիչ իրավունքներին և պարտականություններին, ինչպես նաև Բյուրոյի կանոններով նախատեսված բոլոր պահանջներին և համաձայն է դրանց հետ, որակավորումն ստանալու պահից անվերապահորեն ձեռք է բերում (ստանձնում է) վերը նշված լրացուցիչ իրավունքները և պարտականությունները, Բյուրոյի կանոններով սահմանված բոլոր պահանջները կատարելու պարտականությունը՝ որպես իր իրավունքներ, իր պարտականություններ և իր կողմից կատարման ենթակա պահանջներ՝ լիակատար պատասխանատվություն կրելով դրանց չպահպանման արդյունքում պատճառված վնասների հատուցման համար:</p>			
4.7.	<p>Տեղեկացված է, որ իր գործունեության ընթացքում պետք է առաջնորդվի Բյուրոյի կանոններով՝ ներառյալ Բյուրոյի «ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոններով, այդ թվում՝ դրանցում կատարված փոփոխություններով և լրացումներով, որոնք մշտապես հրապարակվում են Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում և համաձայն (հաստատում) է, որ կանոնները (փոփոխությունները, լրացումները) նշված կայքում հրապարակման պահից համարվում են իրեն ծանուցված:</p>			
5.	Այլ նշումներ			
6.	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 30%;">Դիմումատուի անունից</td> <td style="width: 35%; text-align: center;">(անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)</td> <td style="width: 35%; text-align: center;">(ստորագրությունը)</td> </tr> </table>	Դիմումատուի անունից	(անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)	(ստորագրությունը)
Դիմումատուի անունից	(անունը և ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)	(ստորագրությունը)		
7.	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 30%;">Դիմում ընդունող</td> <td style="width: 35%; text-align: center;">(զբաղեցրած պաշտոնը)</td> <td style="width: 35%; text-align: center;">(անունը և ազգանունը) (ստորագրությունը)</td> </tr> </table>	Դիմում ընդունող	(զբաղեցրած պաշտոնը)	(անունը և ազգանունը) (ստորագրությունը)
Դիմում ընդունող	(զբաղեցրած պաշտոնը)	(անունը և ազգանունը) (ստորագրությունը)		

8.	Դիմումի լրացման ամսաթիվը			
		օր	ամիս	տարի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Որակավորման համար դիմած փորձաքննություն իրականացնող իրավաբանական անձ փորձագետների կողմից Բյուրոյի կանոնների պահանջների համապատասխանության վերաբերյալ

_____ (տրման վայր)

« ____ » _____ 20 ____ թ.

Ես՝ _____ ս (անձը հաստատող փաստաթուղթ՝
_____, տրված՝ _____ կողմից _____ թ-ին, հասցե՝
_____), հանդես գալով
_____-ի անունից

սույնով հաստատում եմ, որ _____-ը որևէ կերպ
փոխկապակցված չէ ___/___/20__թ. ներկայացված որակավորում ստանալու վերաբերյալ
դիմումում նշված տեսակի որակավորում ունեցող որևէ իրավաբանական անձ համարվող
փորձագետի (այսուհետ՝ նմանատիպ փորձագետ) հետ, և իր գործադիր մարմնի ղեկավարն
ու ֆիզիկական անձ փորձագետները աշխատանքային և (կամ) քաղաքացիաիրավական
հարաբերությունների մեջ չեն գտնվում նմանատիպ փորձագետի, իսկ պատահարի
առաջացման պատճառների փորձագետի որակավորման համար դիմելու դեպքում՝ նաև
որևէ ապահովագրական ընկերության հետ: Տեղեկացված եմ նաև, որ որակավորումից
հետո նշված արգելքի չպահպանումը կհանգեցնի
_____-ի՝ համապատասխան որակավորումից
զրկմանը:

**Հայտարարարու
կազմակերպության
գործադիր մարմնի ղեկավար՝**

_____ ստորագրություն

_____ անուն, ազգանուն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Պատահարի առաջացման պատճառների որակավորման համար դիմած Ֆիզիկական անձ փորձագետների կողմից Բյուրոյի կանոնների պահանջների համապատասխանության վերաբերյալ

_____ «____» _____ 20____թ.
(տրման վայր)

Ես՝ _____ և (անձը հաստատող
փաստաթուղթ՝ _____, տրված՝ _____ կողմից _____թ-ին, հասցե՝
_____),

սույնով հաստատում եմ, որ տեղեկացված եմ Հայաստանի
ավտոապահովագրողների Բյուրոյի «ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող
կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոններով նախատեսված
պահանջներին, հավաստում եմ, որ համապատասխանում եմ դրանց և կհետևեմ այդ
պահանջների պահպանմանը: Տեղեկացված եմ նաև, որ նշված պահանջները որևէ մեկի
չպահպանումը կհանգեցնի իմ՝ պատահարի առաջացման պատճառների փորձագետի
որակավորումից զրկմանը:

Հայտարարարու՝ _____
ստորագրություն

անուն, ազգանուն

ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՌԱՋԱՐԿԻ (ԴՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծանուցման ամսաթիվը			
	օր	ամիս	տարի
Ծանուցում իրականացնողը			
	(նշվում է փորձագիտական կազմակերպության անվանումը)		
Ծանուցումն հասցեագրված է	Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյին և վերջինին անդամակցող բոլոր ապահովագրական ընկերություններին		
Ծանուցումն իրականացվում է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի RL 1-003 ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման կանոնների պահանջների համապատասխան			
Սույնով տեղեկացնում ենք, որ _____ թվականից սկսած մեր կողմից առաջարկվող փորձաքննությունների արժեքը կկազմի՝			
Փորձաքննության տեսակը		Փորձաքննության արժեքը (ՀՀ դրամով՝ ներառյալ հարկերը)	
1.	Բյուրոյի կանոններով սահմանված՝ պատահարի առաջացման պատճառների առաջնային փորձաքննություն		
1.1	Բյուրոյի կանոններով սահմանված՝ պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննություն		
2.	Բյուրոյի կանոններով սահմանված՝ հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտություն		
Փորձագիտական կազմակերպության ղեկավար			
		(անունը և ազգանունը)	(ստորագրությունը)

**«ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող
կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոնների**

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՑԿԱՑՎՈՂ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԹԵՄԱՆԵՐԸ**

1. Փորձաքննության ժամանակ օգտագործվելիք ծրագրային համակարգերի և տեխնիկական միջոցների ներկայացում,
2. Փորձագետների անկախության ապահովման և աշխատանքի արդյունավետ կազմակերպման սկզբունքներ,
3. Ռիսկերի կառավարման ներքին համակարգ,
4. Գնային և գործընկերային քաղաքականություն,
5. Ոլորտին վերաբերող առաջարկություններ և դիտողություններ:

Հավելված 4.1

«ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոնների

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՇԽԱՏՈՂԻ՝ ՈՐՊԵՍ ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ստորագրման վայրը

Ստորագրման ամսաթիվը

«_____» _____ (այսուհետ՝ գործատու), ի դեմս _____, ով գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____-ը (այսուհետ՝ աշխատող), մյուս կողմից (այսուհետ՝ գործատուն և աշխատողը միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Կողմերի միջև _____թ. կնքված թիվ _____ աշխատանքային պայմանագիրը/_____թ. ընդունված թիվ _____ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտը¹, համաձայնության եկան հետևյալի մասին՝

1. Սույն համաձայնագրով սահմանվում են աշխատողի՝ որպես ԱՊՊԱ ոլորտում վնասների փորձագետի լրացուցիչ իրավունքները և պարտականությունները՝ կարգավորելով այդ առումով կողմերի փոխհարաբերությունները, սահմանելով նաև աշխատողի նկատմամբ երրորդ անձանց իրավունքները:

2. Որպես ԱՊՊԱ ոլորտում վնասների փորձագետ՝ աշխատողը պարտավոր է՝

2.1. մշտապես համապատասխանել Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին,

2.2. պատշաճ տիրապետել ԱՊՊԱ ոլորտում վնասների գնահատման փորձաքննության ոլորտը կարգավորող՝ Բյուրոյի խորհրդի հաստատած կանոններով սահմանված կարգին և մեթոդաբանությանը, ԱՊՊԱ ոլորտում վնասների գնահատման փորձաքննություններին վերաբերող այլ կարգավորումներին, որոնք հրապարակված են Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում,

2.3. փորձաքննություն իրականացնել միայն այն դեպքում, երբ առկա են Բյուրոյի կանոններով և սույն համաձայնագրով նախատեսված՝ փորձաքննության իրականացումը

¹ Ընտրվում և ներառվում է միայն կիրառելի տարբերակը:

թույլատրող պայմանները և բացակայում են արգելող պայմանները, հակառակ դեպքում՝ հրաժարվել փորձաքննության իրականացումից,

2.4. փորձաքննության իրականացման գործընթացում անվերապահորեն առաջնորդվել օրենքով և ԱՊՊԱ ոլորտում վնասների գնահատման փորձաքննության ոլորտը կարգավորող՝ Բյուրոյի խորհրդի հաստատած կանոններով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ, ԱՊՊԱ ոլորտում վնասների գնահատման փորձաքննություններին վերաբերող այլ կարգավորումներով: Ընդ որում, աշխատողը սույն կետով նախատեսված պարտականությունը կրում է ինչպես ապահովագրողների և Բյուրոյի, այնպես էլ ՀՀ դատարանների և ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ԱՊՊԱ ոլորտում պատվիրված փորձաքննությունների իրականացման և ցանկացած այլ տիպի բանավոր կամ գրավոր կարծիքի տրամադրման գործընթացում,

2.5. փորձաքննություն (վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննություն (այսուհետ՝ նախնական զննություն)) իրականացնել բացառապես Բյուրոյի կանոններով սահմանված ձևով տրված պատվերների հիման վրա,

2.6. ապահովել գործատուի կողմից տրամադրված և պատվերի կատարման ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի ու այլ նյութերի, ինչպես նաև իր օգտագործմանը հանձնված առարկաների պահպանվածությունը,

2.7. առանց գործատուի համաձայնության չիրականացնել փորձաքննության իրականացման հետ կապված քննարկումներ, ճշտումներ և ցանկացած պարզաբանումներ տուժողի, նրա ներկայացուցչի կամ իրավահաջորդի, ապահովադրի կամ ապահովագրված անձի հետ: Սույն կետը չի կարող մեկնաբանվել իբրև պատահարի արդյունքում առաջացած վնասների վերաբերյալ կողմնակալ կամ ոչ օբյեկտիվ եզրակացություն տրամադրելու՝ աշխատողի պարտականություն կամ նման եզրակացություն տրամադրելու պահանջ ներկայացնելու՝ գործատուի իրավունք,

2.8. փորձաքննությունների իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ բանկային, ապահովագրական, առևտրային, բժշկական կամ այլ գաղտնիք, անձնական տվյալներ պարունակող կամ ցանկացած այլ տեղեկությունները, փաստաթղթերը, էլեկտրոնային ֆայլերը օգտագործել բացառապես իր աշխատանքային պարտականությունների իրականացման նպատակով՝ ՀՀ օրենսդրությանը և գործատուի իրավական ակտերին համապատասխան, ինչպես նաև երբևէ չհրապարակել կամ երրորդ անձանց չփոխանցել կամ որևէ այլ կերպ երրորդ անձանց հասանելի չդարձնել այդ տեղեկությունները, փաստաթղթերը և էլեկտրոնային ֆայլերը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

2.9. փորձաքննությունները (նախնական զննությունները) իրականացնել համապատասխան տեխնոլոգիաների համաձայն՝ ապահովելով փորձաքննությունների (նախնական զննությունների) արդյունքների ճշտությունը,

2.10. փորձագիտական եզրակացությունները (վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննության ակտերը) կազմել, դրանց արդյունքների (անհնարինության) ծանուցումները գործատուին իրականացնել Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետներում և ձևերով,

2.11. գործատուի և (կամ) Բյուրոյի պահանջով ցանկացած պահի տրամադրել փորձագիտական եզրակացությունները (վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննության ակտերը) և գործընթացներին վերաբերող փաստաթղթեր և հիմնավորումներ,

2.12. իր կողմից կատարված փորձաքննության գծով նշանակված լրացուցիչ, կրկնակի փորձաքննությունների գործընթացներում, Բյուրոյի ստուգիչ փորձաքննություններում, Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից նշանակված փորձաքննությունների գործընթացում, դրա հետ կապված վարչական և դատական վարույթներում ցանկացած շահագրգիռ անձի համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցել և հիմնավորել իր կողմից գնահատված վնասի մեծությունը և գնահատման ընտրված մեթոդաբանությունը,

2.13. փորձաքննություններ (նախնական զննություններ) կատարել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ՝ անկախ գնահատման ենթակա գույքի գտնվելու վայրից: Ընդ որում՝ սույն կետը չի կարող մեկնաբանվել որպես գործատուի կողմից իր աշխատողի համար աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու համար անհրաժեշտ պայմանների (գործուղման հետ կապված, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ փորձաքննության իրականացման հետ կապված այլ լրացուցիչ ծախսերի վճարում (հատուցում) և այլն) ապահովման պարտականությունից ազատում,

2.14. լիակատար նյութական պատասխանատվության սկզբունքով հատուցել Բյուրոյի կանոններով, ինչպես նաև սույն համաձայնագրով իր գործունեությանը ներկայացված պահանջների չպահպանման հետևանքով գործատուին կամ այլ անձանց պատճառված վնասները: Ընդ որում, աշխատողն ընդունում է, որ սույն ենթակետով նախատեսված վնասների հատուցման պարտավորությունն առանց լրացուցիչ ապացուցման համարվում է առկա այն դեպքերում, երբ ա) Բյուրոյի կանոններով սահմանված կարգով իրականացված ստուգիչ փորձաքննության արդյունքում հաստատվել է աշխատողի կողմից կազմված փորձագիտական եզրակացությամբ թույլ տրված այնպիսի շեղումը, որի դեպքում, համաձայն Բյուրոյի կանոնների, հաստատված է համարվում փորձագետի կողմից Բյուրոյի կանոններով սահմանված մեթոդաբանության խախտումը, բացառությամբ, եթե տվյալ եզրակացության հավաստիությունը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, կամ բ) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել

աշխատողի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունը կամ հավաստի են համարվել այնպիսի փորձաքննության արդյունքները, որոնք շեղվում են աշխատողի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունից այն չափով, որը ստուգիչ փորձաքննությամբ հաստատվելու դեպքում, համաձայն Բյուրոյի կանոնների, հաստատված կհամարվեր աշխատողի կողմից Բյուրոյի կանոններով սահմանված մեթոդաբանության խախտումը: Սույն ենթակետի 2-րդ նախադասությամբ նախատեսված հատուցման ենթակա վնասը՝

2.14.1. հաշվարկվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե աշխատողի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունը հատուցման որոշման հիմքում չդրվելու դեպքում ինչ չափի պարտավորությունից կազատվեր կամ ինչ չափի իրավունք ձեռք կբերեր հատուցման գործընթացի մասնակիցը, եթե օրենքի և Բյուրոյի կանոնների ուժով ապահովագրական հատուցումն իրականացվել է աշխատողի կազմած եզրակացության հիման վրա,

2.14.2. կազմում է կրկնակի փորձաքննության անցկացման համար վճարված գումարը, եթե ապահովագրական հատուցումն իրականացվել է իր կողմից տրված փորձագիտական եզրակացության բողոքարկման արդյունքում նշանակված կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա,

2.14.3. ներառում է նաև ստուգիչ փորձաքննության անցկացման համար համապատասխան փորձագետին (կոլեգիալ մարմին) վճարված (վճարման ենթակա) գումարը: *(2.14-րդ ենթակետը փոփ. և լրաց. է 23/12/2021թ թիվ 48-Լ)*

2.15. մշտապես ունենանալ սույն համաձայնագրի 2.14-րդ կետով նախատեսված պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր), որով որպես մեկ ապահովագրական պատահարի (մեկ փորձագիտական եզրակացությամբ պատճառված վնասի) համար ապահովագրական գումարի չափ սահմանված է առնվազն ԱՊՊԱ պատահարի հետևանքով մեկ տուժողի գույքին պատճառված վնասների գծով վճարման ենթակա առավելագույն հատուցման չափը:

3. Փորձաքննության անցկացման (փորձագիտական եզրակացության) տրամադրման կամ նախնական զննության անցկացման (վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննության ակտ) տրամադրելու կամ անհնարինության վերաբերյալ ծանուցելու՝ սույն համաձայնագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում աշխատողը պարտավոր է գործատուի պահանջով գրոծատուին վճարել տույժ՝ այն չափով, որ չափով համապատասխան ժամկետների խախտման համար տույժ վճարելու պահանջ ներկայացնելու Բյուրոյի կանոններով նախատեսված իրավունք է ձեռք բերում ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձը: Սույն համաձայնագրի ստորագրմամբ աշխատողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի իր կողմից թույլ տրված

այլ խախտումների համար Բյուրոյի կանոններով սահմանվեն այլ տուժանքների վճարման պարտավորություններ՝ պարտավորվելով սահմանված կարգով վճարել դրանք:

4. Սույն համաձայնագրի ստորագրմամբ աշխատողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներին իր համապատասխանությունը՝ ներառյալ իր որակավորման համար դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև իր կողմից Բյուրոյի կանոններով սահմանված պարտականությունների պահպանումն ստուգելու նպատակով Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկն իրականացնի իր կանոններով սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ ներառյալ իր մոտ ստուգումներ և ուսումնասիրություններ և այլ անձանցից ու մարմիններից ստանա իր վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր:

5. Սույն համաձայնագրի ստորագրմամբ աշխատողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով Բյուրոյի կողմից իր նկատմամբ կիրառվեն Բյուրոյի կանոններով նախատեսված կարգապահական պատասխանատվության (ներառյալ՝ ֆինանսական բնույթի) միջոցներ՝ պարտավորվելով սահմանված կարգով կրել դրանք (ներառյալ՝ Բյուրոյին վճարել սահմանված տուժանքները):

6. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև _____թ. կնքված թիվ _____ աշխատանքային պայմանագրի/ _____թ. ընդունված թիվ _____ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի² հավելյալ և անբաժանելի մասը: Ընդ որում, սույն կետում նշված աշխատանքային պայմանագրում/աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում³ (դրա փոփոխություններում և/կամ լրացումներում) սույն համաձայնագրով սահմանված պայմաններին հակասող կամ աշխատողի՝ սույն համաձայնագրով սահմանված պարտականությունների կատարմանը կամ իրականացմանը խոչընդոտող այլ պայմաններ նախատեսված լինելու դեպքում այդ պայմանները սույն համաձայնագրին հակասող (խոչընդոտող) մասով չեն գործում, գործում են սույն համաձայնագրով սահմանված պայմանները:

7. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է աշխատողի՝ որպես գործատուի՝ ԱՊՊԱ ոլորտում վնասների փորձագետ հանդիսանալու ողջ ժամանակահատվածում: Սույն համաձայնագրի գործողությունը դադարում է նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Ընդ որում, աշխատանքային հարաբերությունները դադարելու դեպքում չի դադարում աշխատողի՝ սույն լրացուցիչ համաձայնագրի 2.8-րդ կետով նախատեսված պարտականությունը, որը գործում է

² Ընտրվում և ներառվում է միայն կիրառելի տարբերակը:

³ Ընտրվում և ներառվում է միայն կիրառելի տարբերակը:

անժամկետ: Աշխատողը հայտնում է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը, որ այդ պարտականությունը գործում է անորոշ ժամկետով:

8. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, այլ վավերապայմանները և ստորագրությունները:

Գործատու

Աշխատող

Տվյալները, ստորագրությունը

Տվյալները, ստորագրությունը

Հավելված 4.2

«ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոնների

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԿԱՏԱՐՈՂԻ՝ ՈՐՊԵՍ ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ/ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ստորագրման վայրը

Ստորագրման ամսաթիվը

«_____» _____ (այսուհետ՝ պատվիրատու),
ի դեմս _____-ի, ով գործում է _____ հիման վրա, մի կողմից, և
_____ -ը (այսուհետ՝ կատարող), ի դեմս _____-ի, ով գործում
է _____ հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ պատվիրատուն և կատարողը
միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Կողմերի միջև _____թ. կնքված թիվ _____
պայմանագիրը, համաձայնության եկան հետևյալի մասին՝

1. Սույն համաձայնագրով սահմանվում են կատարողի՝ որպես ԱՊՊԱ ոլորտում վնասների իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր փորձագետի լրացուցիչ իրավունքները և պարտականությունները՝ կարգավորելով այդ առումով կողմերի փոխհարաբերությունները, սահմանելով նաև կատարողի նկատմամբ երրորդ անձանց իրավունքները:

2. Որպես ԱՊՊԱ ոլորտում վնասների իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր փորձագետ՝ կատարողը պարտավոր է՝

2.1. մշտապես համապատասխանել Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին,

2.2. ապահովել փորձաքննություն իրականացնող իր համապատասխան քանակի աշխատողների մշտական համապատասխանությունը Բյուրոյի կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին, փորձաքննության իրականացումը չհանձնարարել իր այն աշխատողներին, որոնք փոխկապակցված են պատվիրված փորձաքննությանը որևէ առնչություն ունեցող անձի հետ (վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վարորդ կամ սեփականատեր, տուժող, պատվիրատու և այլն),

2.3. պատշաճ տիրապետել ԱՊՊԱ ոլորտում վնասների գնահատման փորձաքննության ոլորտը կարգավորող՝ Բյուրոյի խորհրդի հաստատած կանոններով սահմանված կարգին և մեթոդաբանության, ԱՊՊԱ ոլորտում վնասների գնահատման փորձաքննություններին վերաբերող այլ կարգավորումներին, որոնք հրապարակված են Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում,

2.4. փորձաքննությունները (վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննությունները (այսուհետ՝ նախնական զննություն)) իրականացնել անձամբ, դրանց կատարումը հանձնարարել միայն Բյուրոյի կանոններով նախատեսված համապատասխան որակավորում ունեցող այն աշխատողներին, որոնց մոտ առկա է Բյուրոյի կանոններով և սույն համաձայնագրով նախատեսված՝ փորձաքննության իրականացումը թույլատրող պայմանները և բացակայում են արգելող պայմանները,

2.5. փորձաքննություն իրականացնել միայն այն դեպքում, երբ առկա են Բյուրոյի կանոններով և սույն համաձայնագրով նախատեսված՝ փորձաքննության իրականացումը թույլատրող պայմանները և բացակայում են արգելող պայմանները, հակառակ դեպքում՝ հրաժարվել փորձաքննության իրականացումից,

2.6. փորձաքննության իրականացման գործընթացում անվերապահորեն առաջնորդվել օրենքով և ԱՊՊԱ ոլորտում վնասների գնահատման փորձաքննության ոլորտը կարգավորող՝ Բյուրոյի խորհրդի հաստատած կանոններով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ, ԱՊՊԱ ոլորտում վնասների գնահատման փորձաքննություններին վերաբերող այլ կարգավորումներով: Ընդ որում, կատարողը սույն կետով նախատեսված պարտականությունը կրում է ինչպես ապահովագրողների և Բյուրոյի, այնպես էլ ՀՀ դատարանների և ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ԱՊՊԱ ոլորտում պատվիրված փորձաքննությունների իրականացման և ցանկացած այլ տիպի բանավոր կամ գրավոր կարծիքի տրամադրման գործընթացում,

2.7. փորձաքննություն (նախնական զննություն) իրականացնել բացառապես Բյուրոյի կանոններով սահմանված ձևով տրված պատվերների հիման վրա,

2.8. ապահովել պատվիրատուի կողմից տրամադրված և պատվերի կատարման ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի ու այլ նյութերի, ինչպես նաև իր օգտագործմանը հանձնված առարկաների պահպանվածությունը, անհրաժեշտության դեպքում դրանք վերադարձնել պատվիրատուին,

2.9. առանց պատվիրատուի համաձայնության չիրականացնել փորձաքննության իրականացման հետ կապված քննարկումներ, ճշտումներ և ցանկացած պարզաբանումներ տուժողի, նրա ներկայացուցչի կամ իրավահաջորդի, ապահովադրի կամ ապահովագրված անձի հետ: Սույն կետը չի կարող մեկնաբանվել իբրև պատահարի արդյունքում առաջացած վնասների վերաբերյալ կողմնակալ կամ ոչ օբյեկտիվ եզրակացություն տրամադրելու՝ կատարողի պարտականություն կամ նման եզրակացություն տրամադրելու պահանջ ներկայացնելու՝ պատվիրատուի իրավունք,

2.10. պատվիրատուի պահանջով նրան հաղորդել փորձաքննությունների (նախնական զննությունների) կատարման ընթացքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները,

2.11. փորձաքննությունների իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ բանկային, ապահովագրական, առևտրային, բժշկական կամ այլ գաղտնիք, անձնական տվյալներ պարունակող կամ ցանկացած այլ տեղեկությունները, փաստաթղթերը, էլեկտրոնային ֆայլերը օգտագործել բացառապես պատվերով նախատեսված փորձաքննության (նախնական զննության) իրականացման նպատակով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև երբևէ չհրապարակել կամ երրորդ անձանց չփոխանցել կամ որևէ այլ կերպ երրորդ անձանց հասանելի չդարձնել այդ տեղեկությունները, փաստաթղթերը և էլեկտրոնային ֆայլերը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

2.12. փորձաքննությունները (նախնական զննությունները) իրականացնել համապատասխան տեխնոլոգիաների համաձայն՝ ապահովելով փորձաքննությունների (նախնական զննությունների) արդյունքների ճշտությունը,

2.13. փորձագիտական եզրակացությունները (վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննության ակտերը) կազմել, դրանց արդյունքների (անհնարինության) ծանուցումները պատվիրատուին իրականացնել Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետներում և ձևերով,

2.14. իր կողմից կատարված փորձաքննության գծով նշանակված լրացուցիչ, կրկնակի փորձաքննությունների գործընթացներում, Բյուրոյի ստուգիչ փորձաքննություններում, Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից նշանակված փորձաքննությունների գործընթացում, դրա հետ կապված վարչական և դատական վարույթներում ցանկացած շահագրգիռ անձի համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցել և հիմնավորել իր կողմից գնահատված վնասի մեծությունը և գնահատման ընտրված մեթոդաբանությունը,

2.15. փորձաքննություններ (նախնական զննություններ) կատարել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ՝ անկախ գնահատման ենթակա գույքի գտնվելու վայրից,

2.16. լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքով հատուցել Բյուրոյի կանոններով, ինչպես նաև սույն համաձայնագրով իր գործունեությանը ներկայացված պահանջների չպահպանման հետևանքով պատվիրատուին կամ այլ անձանց պատճառված վնասները: Ընդ որում, կատարողն ընդունում է, որ սույն ենթակետով նախատեսված վնասների հատուցման պարտավորությունն առանց լրացուցիչ ապացուցման համարվում է առկա այն դեպքերում, երբ ա) Բյուրոյի կանոններով սահմանված կարգով իրականացված ստուգիչ փորձաքննության արդյունքում հաստատվել է կատարողի կողմից կազմված փորձագիտական եզրակացությամբ թույլ տրված այնպիսի շեղումը, որի դեպքում,

համաձայն Բյուրոյի կանոնների, հաստատված է համարվում փորձագետի կողմից Բյուրոյի կանոններով սահմանված մեթոդաբանության խախտումը, բացառությամբ, եթե տվյալ եզրակացության հավաստիությունը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, կամ բ) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել կատարողի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունը կամ հավաստի են համարվել այնպիսի փորձաքննության արդյունքները, որոնք շեղվում են կատարողի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունից այն չափով, որը ստուգիչ փորձաքննությամբ հաստատվելու դեպքում, համաձայն Բյուրոյի կանոնների, հաստատված կհամարվեր կատարողի կողմից Բյուրոյի կանոններով սահմանված մեթոդաբանության խախտումը: Սույն ենթակետի 2-րդ նախադասությամբ նախատեսված հատուցման ենթակա վնասը՝

2.16.1. հաշվարկվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե կատարողի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունը հատուցման որոշման հիմքում չդրվելու դեպքում ինչ չափի պարտավորությունից կազատվեր կամ ինչ չափի իրավունք ձեռք կբերեր հատուցման գործընթացի մասնակիցը, եթե օրենքի և Բյուրոյի կանոնների ուժով ապահովագրական հատուցումն իրականացվել է կատարողի կազմած եզրակացության հիման վրա,

2.16.2. կազմում է կրկնակի փորձաքննության անցկացման համար վճարված գումարը, եթե ապահովագրական հատուցումն իրականացվել է իր կողմից տրված փորձագիտական եզրակացության բողոքարկման արդյունքում նշանակված կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա,

2.16.3. ներառում է նաև ստուգիչ փորձաքննության անցկացման համար համապատասխան փորձագետին (կոլեգիալ մարմնին) վճարված (վճարման ենթակա) գումարը, (2.16-րդ ենթակետը փոփ. և լրաց. է 23/12/2021թ թիվ 48-Լ)

2.17. մշտապես ունենանալ սույն համաձայնագրի 2.16-րդ կետով նախատեսված պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր), որով որպես մեկ ապահովագրական պատահարի (մեկ փորձագիտական եզրակացությամբ պատճառված վնասի) համար ապահովագրական գումարի չափ սահմանված է առնվազն ԱՊՊԱ պատահարի հետևանքով մեկ տուժողի գույքին պատճառված վնասների գծով վճարման ենթակա առավելագույն հատուցման չափը:

3. Փորձաքննության անցկացման (փորձագիտական եզրակացության) տրամադրման) կամ նախնական զննության անցկացման (վնասված գույքի փորձաքննության համար նախնական զննության ակտ) տրամադրելու կամ անհնարինության վերաբերյալ ծանուցելու՝ սույն համաձայնագրով սահմանված ժամկետների խախտման դեպքում կատարողը պարտավոր է պատվիրատուի պահանջով պատվիրատուին վճարել տույժ՝ այն չափով, որ չափով համապատասխան ժամկետների խախտման համար տույժ վճարելու պահանջ ներկայացնելու Բյուրոյի կանոններով նախատեսված իրավունք է ձեռք բերում ապահովագրական հատուցում վճարելու

վերաբերյալ դիմում ներկայացրած անձը: Սույն համաձայնագրի ստորագրմամբ կատարողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի իր կողմից թույլ տրված այլ խախտումների համար Բյուրոյի կանոններով սահմանվեն այլ տուժանքների վճարման պարտավորություններ՝ պարտավորվելով սահմանված կարգով վճարել դրանք:

4. Սույն համաձայնագրի ստորագրմամբ կատարողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներին իր համապատասխանությունը՝ ներառյալ իր որակավորման համար դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև իր կողմից Բյուրոյի կանոններով սահմանված պարտականությունների պահպանումն ստուգելու նպատակով Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկն իրականացնի իր կանոններով սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ ներառյալ իր մոտ ստուգումներ և ուսումնասիրություններ և այլ անձանցից ու մարմիններից ստանա իր վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր:

5. Սույն համաձայնագրի ստորագրմամբ կատարողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով Բյուրոյի կողմից իր նկատմամբ կիրառվեն Բյուրոյի կանոններով նախատեսված կարգապահական պատասխանատվության (ներառյալ՝ ֆինանսական բնույթի) միջոցներ՝ պարտավորվելով սահմանված կարգով կրել դրանք (ներառյալ՝ Բյուրոյին վճարել սահմանված տուժանքները): Ընդ որում, սույն կետով սահմանված Բյուրոյի իրավունքները տարածվում են նաև կատարողի՝ փորձաքննություն իրականացնող աշխատողների նկատմամբ, ինչի կապակցությամբ կատարողը պարտավոր է աշխատողների հետ կնքվող պայմանագրերում ներառել Բյուրոյի այդ իրավունքների իրականացումն ապահովող դրույթ, և պատասխանատվություն է կրում այդ դրույթի չներառման և դրա հետևանքների համար:

6. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Կողմերի միջև _____թ. կնքված թիվ _____ պայմանագրի հավելյալ և անբաժանելի մասը: Ընդ որում, սույն կետում նշված պայմանագրում (դրա փոփոխություններում և/կամ լրացումներում) սույն համաձայնագրով սահմանված պայմաններին հակասող կամ կատարողի՝ սույն համաձայնագրով սահմանված պարտականությունների կատարմանը կամ իրավունքների իրականացմանը խոչընդոտող այլ պայմաններ նախատեսված լինելու դեպքում այդ պայմանները սույն համաձայնագրին հակասող (խոչընդոտող) մասով չեն գործում, գործում են սույն համաձայնագրով սահմանված պայմանները:

7. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է կատարողի՝ որպես պատվիրատուի՝ ԱՊՊԱ ոլորտում վնասների փորձագետ իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր փորձագետ հանդիսանալու ողջ ժամանակահատվածում: Սույն համաձայնագրի գործողությունը դադարում է նաև օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Ընդ որում, սույն համաձայնագրով դադարելու

դեպքում չի դադարում կատարողի՝ սույն լրացուցիչ համաձայնագրի 2.11-րդ կետով նախատեսված պարտականությունը, որը գործում է անժամկետ: Կատարողը հայտնում է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը, որ այդ պարտականությունը գործում է անորոշ ժամկետով:

8. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, այլ վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Կատարող

Տվյալները, ստորագրությունը

Տվյալները, ստորագրությունը

Հավելված 4.3

«ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոնների

ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սույն հավելվածով սահմանվում են ԱՊՊԱ ոլորտում իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետի և ըստ կիրառելիության՝ ֆիզիկական անձ պատճառների փորձագետի լրացուցիչ իրավունքները և պարտականությունները՝ կարգավորելով այդ առումով պատվիրատուի և փորձագետի փոխհարաբերությունները, սահմանելով նաև փորձագետի նկատմամբ երրորդ անձանց իրավունքները:

2. ԱՊՊԱ ոլորտում իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետը և ըստ կիրառելիության՝ ֆիզիկական անձ պատճառների փորձագետը պարտավոր է՝

1) մշտապես համապատասխանել Բյուրոյի կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին,

2) ապահովել փորձաքննություն իրականացնող իր համապատասխան քանակով աշխատողների մշտական համապատասխանությունը Բյուրոյի կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին, փորձաքննության իրականացումը չհանձնարարել իր այն աշխատողներին, որոնք փոխկապակցված են պատվիրված փորձաքննությանը որևէ առնչություն ունեցող անձի հետ (վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վարորդ կամ սեփականատեր, տուժող, պատվիրատու և այլն),

3) պատշաճ տիրապետել ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման պատճառների փորձաքննության ոլորտը կարգավորող՝ Բյուրոյի խորհրդի հաստատած կանոններով սահմանված կարգին ու մեթոդաբանության, ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման փորձաքննություններին վերաբերող այլ կարգավորումներին, որոնք հրապարակված են Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում,

4) փորձաքննություններն իրականացնել անձամբ, դրանց կատարումը հանձնարարել միայն Բյուրոյի կանոններով նախատեսված համապատասխան որակավորում ունեցող այն աշխատողներին, որոնց մոտ առկա է Բյուրոյի կանոններով՝ ներառյալ սույն հավելվածով նախատեսված՝ փորձաքննության իրականացումը թույլատրող պայմանները և բացակայում են արգելող պայմանները,

5) փորձաքննություն իրականացնել միայն այն դեպքում, երբ առկա են Բյուրոյի կանոններով՝ ներառյալ սույն հավելվածով նախատեսված՝ փորձաքննության իրականացումը թույլատրող պայմանները և բացակայում են արգելող պայմանները, հակառակ դեպքում՝ հրաժարվել փորձաքննության իրականացումից,

6) փորձաքննության իրականացման գործընթացում և պատվիրատուի հետ հարաբերություններում անվերապահորեն առաջնորդվել օրենքով, սույն կանոններով և ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման պատճառների փորձաքննության ոլորտը կարգավորող՝ Բյուրոյի խորհրդի հաստատած այլ կանոններով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ, ԱՊՊԱ ոլորտում պատահարի առաջացման պատճառների փորձաքննություններին վերաբերող այլ կարգավորումներով: Ընդ որում, իրավաբանական անձ հանդիսացող պատճառների փորձագետը սույն կետով նախատեսված պարտականությունը կրում է ինչպես ապահովագրողների և Բյուրոյի, այնպես էլ ՀՀ դատարանների և ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ԱՊՊԱ ոլորտում պատվիրված փորձաքննությունների իրականացման և ցանկացած այլ տիպի բանավոր կամ գրավոր կարծիքի տրամադրման գործընթացում,

7) փորձաքննություն իրականացնել բացառապես Բյուրոյի կանոններով սահմանված ձևով տրված պատվերների հիման վրա,

8) ապահովել պատվիրատուի կողմից տրամադրված և պատվերի կատարման ընթացքում ձեռք բերված փաստաթղթերի ու այլ նյութերի, ինչպես նաև իր օգտագործմանը հանձնված առարկաների պահպանվածությունը, անհրաժեշտության դեպքում դրանք վերադարձնել պատվիրատուին,

9) առանց պատվիրատուի համաձայնության չիրականացնել փորձաքննության իրականացման հետ կապված քննարկումներ, ճշտումներ և ցանկացած պարզաբանումներ տուժողի, նրա ներկայացուցչի կամ իրավահաջորդի, ապահովադրի կամ ապահովագրված անձի հետ: Սույն կետը չի կարող մեկնաբանվել իբրև պատահարի արդյունքում առաջացած պատահարի առաջացման պատճառների վերաբերյալ կողմնակալ կամ ոչ օբյեկտիվ եզրակացություն տրամադրելու՝ փորձագետի պարտականություն կամ նման եզրակացություն տրամադրելու պահանջ ներկայացնելու՝ պատվիրատուի իրավունք,

10) պատվիրատուի պահանջով նրան հաղորդել փորձաքննությունների կատարման ընթացքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները,

11) փորձաքննությունների իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ բանկային, ապահովագրական, առևտրային, բժշկական կամ այլ գաղտնիք, անձնական տվյալներ պարունակող կամ ցանկացած այլ տեղեկությունները, փաստաթղթերը, էլեկտրոնային ֆայլերը օգտագործել բացառապես պատվերով նախատեսված փորձաքննության իրականացման նպատակով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև երբևէ չիրապարակել կամ երրորդ անձանց չփոխանցել կամ որևէ այլ կերպ

երրորդ անձանց հասանելի չդարձնել այդ տեղեկությունները, փաստաթղթերը և էլեկտրոնային ֆայլերը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

12) փորձաքննություններն իրականացնել համապատասխան տեխնոլոգիաների համաձայն՝ ապահովելով փորձաքննությունների արդյունքների ճշտությունը,

13) փորձագիտական եզրակացությունները կազմել, դրանց արդյունքների (անհնարինության) ծանուցումները պատվիրատուին իրականացնել Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետներում և ձևերով,

14) պատվիրատուի և (կամ) Բյուրոյի պահանջով ցանկացած պահի տրամադրել փորձագիտական եզրակացությունները և գործընթացներին վերաբերող փաստաթղթեր և հիմնավորումներ,

15) իր կողմից կատարված փորձաքննության գծով նշանակված լրացուցիչ, կրկնակի փորձաքննությունների գործընթացներում, Բյուրոյի ստուգիչ փորձաքննություններում, Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից նշանակված փորձաքննությունների գործընթացում, դրա հետ կապված վարչական և դատական վարույթներում ցանկացած շահագրգիռ անձի համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցել և հիմնավորել իր կողմից կատարված փորձաքննության արդյունքները և մեթոդաբանությունը,

16) փորձաքննություններ կատարել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ՝ անկախ պատահարին մասնակից ավտոտրանսպորտային միջոցների գտնվելու վայրից,

17) լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքով հատուցել Բյուրոյի կանոններով, ինչպես նաև սույն հավելվածով իր գործունեությանը ներկայացված պահանջների չպահպանման հետևանքով պատվիրատուին կամ այլ անձանց պատճառված վնասները: Ընդ որում, փորձագետն ընդունում է, որ սույն ենթակետով նախատեսված վնասների հատուցման պարտավորությունն առանց լրացուցիչ ապացուցման համարվում է առկա այն դեպքերում, երբ ա) Բյուրոյի կանոններով սահմանված կարգով իրականացված ստուգիչ փորձաքննության արդյունքում հաստատվել է փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակացությամբ թույլ տրված այնպիսի շեղումը, որի դեպքում, համաձայն Բյուրոյի կանոնների, հաստատված է համարվում փորձագետի կողմից Բյուրոյի կանոններով սահմանված մեթոդաբանության խախտումը, բացառությամբ, եթե տվյալ եզրակացության հավաստիությունը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, կամ բ) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անվավեր է ճանաչվել փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունը կամ հավաստի են համարվել այնպիսի փորձաքննության արդյունքները, որոնք շեղվում են փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունից այն չափով, որը ստուգիչ փորձաքննությամբ հաստատվելու դեպքում, համաձայն Բյուրոյի կանոնների, հաստատված կհամարվեր փորձագետի կողմից Բյուրոյի կանոններով սահմանված մեթոդաբանության

խախտումը: Սույն ենթակետի 2-րդ նախադասությամբ նախատեսված հատուցման ենթակա վնասը՝

ա. հաշվարկվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե փորձագետի կողմից կազմված փորձագիտական եզրակացությունը հատուցման որոշման հիմքում չդրվելու դեպքում ինչ չափի պարտավորությունից կազատվեր կամ ինչ չափի իրավունք ձեռք կբերեր հատուցման գործընթացի մասնակիցը, եթե օրենքի և Բյուրոյի կանոնների ուժով ապահովագրական հատուցումն իրականացվել է փորձագետի կազմած եզրակացության հիման վրա,

բ. կազմում է կրկնակի փորձաքննության անցկացման համար վճարված գումարը, եթե ապահովագրական հատուցումն իրականացվել է իր կողմից տրված փորձագիտական եզրակացության բողոքարկման արդյունքում նշանակված կրկնակի փորձաքննության արդյունքների հիման վրա,

գ. ներառում է նաև ստուգիչ փորձաքննության անցկացման համար համապատասխան փորձագետին (կոլեգիալ մարմնին) վճարված (վճարման ենթակա) գումարը, *(17-րդ ենթակետը փոփ. և լրաց. է 23/12/2021թ թիվ 48-Լ)*

18) մշտապես ունենանալ սույն կետի 17)-րդ ենթակետով նախատեսված պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր), որով որպես մեկ ապահովագրական պատահարի (մեկ փորձագիտական եզրակացությամբ պատճառված վնասի) համար ապահովագրական գումարի չափ սահմանված է առնվազն մեկ ԱՊՊԱ պատահարի հետևանքով բոլոր տուժողներին պատճառված բոլոր վնասների գծով վճարման ենթակա առավելագույն հատուցման չափը,

19) իրեն պատվիրված ծառայությունը համարել չմատուցված և չպահանջել դրա դիմաց վճարել, եթե իր կողմից պատվիրատուին չի տրամադրվել Բյուրոյի կանոններով սահմանված ձևին համապատասխանող փորձագիտական եզրակացություն՝ անկախ այն հանգամանքից, որ առկա են եղել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին պատասխան ներկայացնելու՝ Բյուրոյի կանոններով նախատեսված հիմքերը:

3. Փորձաքննության անցկացման (փորձագիտական եզրակացության) տրամադրման) կամ անհնարինության վերաբերյալ ծանուցելու՝ սույն հավելվածով սահմանված ժամկետների խախտման դեպքում փորձագետը պարտավոր է պատվիրատուի պահանջով պատվիրատուին վճարել տույժ՝ այն չափով, որ չափով համապատասխան ժամկետների խախտման համար տույժ վճարելու պահանջ ներկայացնելու Բյուրոյի կանոններով նախատեսված իրավունք է ձեռք բերում ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձը: Փորձագետի կողմից թույլ տրված այլ խախտումների համար Բյուրոյի կանոններով կարող են սահմանվել այլ տուժանքների վճարման պարտավորություններ, որոնք փորձագետը պարտավոր է սահմանված կարգով կատարել:

4. Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներին փորձագետի համապատասխանությունը՝ ներառյալ նրա որակավորման համար դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև նրա կողմից Բյուրոյի կանոններով սահմանված պարտականությունների պահպանումն ստուգելու նպատակով Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկը կարող են իրականացնել համապատասխան վերահսկողական միջոցառումներ՝ ներառյալ փորձագետի մոտ ստուգումներ և ուսումնասիրություններ և այլ անձանցից ու մարմիններից ստանալ փորձագետի վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր:

5. Սույն հավելվածի համաձայն Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով Բյուրոյի կողմից փորձագետի նկատմամբ կարող են կիրառվել Բյուրոյի կանոններով նախատեսված կարգապահական պատասխանատվության (ներառյալ՝ ֆինանսական բնույթի) միջոցներ, որոնք փորձագետը պարտավորվում է սահմանված կարգով կրել (ներառյալ՝ Բյուրոյին վճարել սահմանված տուժանքները): Ընդ որում, սույն կետով սահմանված Բյուրոյի իրավունքները տարածվում են նաև փորձագետի՝ փորձաքննություն իրականացնող աշխատողների նկատմամբ, ինչի կապակցությամբ փորձագետը պարտավոր է աշխատողների հետ կնքվող պայմանագրերում ներառել Բյուրոյի այդ իրավունքների իրականացումն ապահովող դրույթ, և պատասխանատվություն է կրում այդ դրույթի չներառման և դրա հետևանքների համար:

6. Իրավաբանական անձ համարվող պատճառների փորձագետն իրավունք ունի պատվիրատուից պահանջելու Բյուրոյի կանոնների համաձայն՝ իր կողմից տրված փորձագիտական եզրակացությունների դիմաց վճարելու սույն կանոններով նախատեսված համապատասխան գնացուցակով նախատեսված ծառայության վճարը սույն կանոններով սահմանված ժամկետում:

7. Բյուրոյի՝ իր գործունեությանը վերաբերող կանոններում փոփոխությունների կամ լրացումների հետ անհամաձայնության դեպքում փորձագետն իրավունք ունի անհամաձայնության վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնել Բյուրոյին, որի դեպքում փորձագետի որակավորումը Բյուրոյի կանոններով սահմանված կարգով դադարում է:

8. Փորձագետի հետ ձևավորվող պայմանագրային իրավահարաբերություններում սույն հավելվածով սահմանված պարտականությունների կատարմանը կամ իրավունքների իրականացմանը խոչընդոտող պայմաններ նախատեսված լինելու դեպքում այդ պայմանները սույն հավելվածին հակասող (խոչընդոտող) մասով չեն գործում, գործում են սույն հավելվածով սահմանված պայմանները:

9. Սույն հավելվածով սահմանված պահանջները գործում են փորձագետի՝ որպես ԱՊՊԱ ոլորտում պատճառների փորձագետ հանդիսանալու ողջ ժամանակահատվածում: Ընդ որում, սույն հավելվածով սահմանված պահանջների՝ փորձագետի նկատմամբ կիրառելիությունը դադարելու դեպքում չի դադարում փորձագետի՝ սույն հավելվածի 11)-րդ

Ենթակետով նախատեսված պարտականությունը, որը գործում է անժամկետ: Փորձագետը որակավորում ստանալու վերաբերյալ դիմումի ստորագրմամբ հայտնում է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը, որ այդ պարտականությունը գործում է անորոշ ժամկետով:

Հավելված 5.1

«ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոնների

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԹԻՎ-_____

Ստորագրման վայրը

Ստորագրման ամսաթիվը

«_____» _____ (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս _____-ի, ով գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____-ը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս _____-ի, ով գործում է _____ հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Պատվիրատուն և Կատարողը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ձևով տրված պատվերի (այսուհետ՝ Պատվեր) հիման վրա կատարել ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված վնասների վերանորոգման՝ Պայմանագրի 1.2-րդ կետում նշված աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ) և դրանց արդյունքները Պայմանագրով սահմանված ժամկետում հանձնել Պատվիրատուին (Պատվերում նշված ստացողին (այսուհետ՝ Ստացող)), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Պայմանագրով նախատեսված կարգով և Պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքը և Պայմանագրով սահմանված ժամկետներում, կարգով և չափով վճարել Աշխատանքների գինը:

1.2. Պատվերով Կատարողին կարող են առաջադրվել ապահովագրական պատահարի հետևանքով _____ մակնիշների _____ մոդելների¹ ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված վնասի վերանորոգման հետևյալ աշխատանքների (դրանցից մեկի կամ մի մասի) կատարումը՝

1.2.1. կմախքի վերանորոգում,

1.2.2. շարժիչի վերանորոգում,

¹ Բոլոր մակնիշների և (կամ) մոդելների ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման դեպքում համապատասխան լրացման ենթակա մասում (մասերում) նշվում է «ցանկացած» բառը:

1.2.3. փոխանցման տուփի վերանորոգում,

1.2.4. ընթացամասերի վերանորոգում,

1.2.5. էլեկտրականության վերանորոգում,

1.2.6. ցանկացած տեսակի վնասի վերականգնման համար անհրաժեշտ այլ վերանորոգման աշխատանքներ:

1.3. Կատարողը պարտավորվում է Աշխատանքները կատարել անձամբ, իր ուժերով, սարքավորումներով և նյութերով և կրում է պատասխանատվություն Պատվիրատուի առջև՝ Աշխատանքների արդյունքի համար՝ ՀՀ օրենսդրությանը և Պայմանագրին համապատասխան:

1.4. Պայմանագրի համաձայն՝ Աշխատանքները համարվում են կատարված Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) կանոններով սահմանված հանձնման-ընդունման ակտը Ստացողի, Պատվիրատուի և Կատարողի կողմից եռակողմ ստորագրվելու պահից: Ընդ որում, Ստացողի կողմից հանձնման-ընդունման ակտը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում անհիմն չստորագրվելու կամ ստորագրումից խուսափելու դեպքում նշված ակտը համարվում է նրա կողմից ստորագրված:

2. Պատվեր տրալու ձևը

2.1. Աշխատանքների կատարման անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն լրացնում է Պատվերի մինչև 2-րդ կետը ներառյալ և այն ներկայացնում Կատարողին: Ստանալով Պատվերի նախագիծը, Կատարողը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում լրացնում է Պատվերի 3-րդ կետը և այն ներկայացնում Պատվիրատուին:

2.2. Եթե Կատարողի առաջարկած ժամկետներն ընդունելի չեն, ապա Պատվիրատուն 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշում է կատարում Պատվերի 4-րդ կետի «Պատվերը համարել չտրված» դաշտում և այն ստորագրությամբ ուղարկում է Կատարողին: Սույն կետում նշված դեպքում Պատվերը համարվում է Կատարողին չտրված, և դրա գծով Պայմանագրով նախատեսված հետագա փոխհարաբերությունները չեն առաջանում:

2.3. Եթե Կատարողի առաջարկած ժամկետները ընդունելի են, ապա Պատվիրատուն 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում լրացնում է Պատվերի 5-րդ կետը, նշում է կատարում Պատվերի 4-րդ կետի «Պատվերը համարել տրված» դաշտում և այն ստորագրությամբ (Պատվերի 6-րդ կետ) ուղարկում է Կատարողին: Սույն կետում նշված դեպքում Պատվերը համարվում է Կատարողին տրված, և դրա գծով Կողմերի միջև առաջանում են Պայմանագրով նախատեսված հետագա փոխհարաբերությունները:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրով և Պայմանագրով իրեն վերապահված բոլոր իրավունքները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով վճարել Աշխատանքների գինը,

3.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կատարողի և Ստացողի մասնակցությամբ զննել և ընդունել Պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքները (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից՝ Աշխատանքների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքներում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1. իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրով և Պայմանագրով իրեն վերապահված բոլոր իրավունքները:

3.4. Կատարողը պարտավոր է՝

3.4.1. մշտապես համապատասխանել Բյուրոյի կանոններով համապատասխան որակավորումն ստանալու համար սահմանված պահանջներին,

3.4.2. վերանորոգում իրականացնել միայն այն դեպքում, երբ առկա են Բյուրոյի կանոններով և Պայմանագրով նախատեսված՝ ԱՊՊԱ ոլորտում ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման իրականացումը թույլատրող պայմանները և բացակայում են արգելող պայմանները, հակառակ դեպքում՝ հրաժարվել վերանորոգում իրականացումից,

3.4.3. Աշխատանքները կատարել պատշաճ որակով՝ Պատվիրատուի կանոններով՝ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարների հետևանքով ավտոտրանսպորտային միջոցներին պատճառված վնասի վերականգնմանը ներկայացվող կարգին և մեթոդաբանությանը, այլ կարգավորումներին համաձայն, որոնք հրապարակված են Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում,

3.4.4. ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգում իրականացնել բացառապես Պայմանագրով սահմանված ձևով տրված Պատվերի հիման վրա,

3.4.5. Պատվերը ստանալուց հետո՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, Պայմանագրի Հավելված 2-ով սահմանված ձևով կազմել և Պատվիրատուին ներկայացնել Պատվերում նշված Աշխատանքների կատարման նախահաշիվը,

3.4.6. ապահովել Պատվիրատուի և (կամ) Բյուրոյի և (կամ) ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների կողմից ցանկացած պահի իր մոտ ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունը՝ Բյուրոյի խորհրդի կողմից սահմանված որակավորման (տեխնիկական) պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով,

3.4.7. համապատասխան պահանջի առկայությամբ՝ ողջամիտ սեղմ ժամկետում Պատվիրատուին և (կամ) Բյուրոյին տրամադրել վերանորոգման գործընթացին վերաբերող փաստաթղթեր և հիմնավորումներ,

3.4.8. իր կողմից կատարված վերանորոգումների գծով ցանկացած գործընթացների շրջանակներում համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցել և հիմնավորել իր կողմից կատարված վերանորոգման անհրաժեշտությունը և դրա հետ կապված ծախսերը,

3.4.9. առանց Պատվիրատուի ներկայացուցչի չիրականացնել վերանորոգման հետ կապված խնդիրների քննարկումներ, ճշտումներ և ցանկացած պարզաբանումներ տուժողի, նրա ներկայացուցչի կամ իրավահաջորդի, ապահովադրի կամ ապահովագրված անձի հետ,

3.4.10. պատշաճ կերպով իր մոտ պահել և նույն վիճակում Ստացողին հետ վերադարձնել փոփոխման ենթակա կամ փոփոխված պահեստամասերը, դետալներն ու ագրեգատները,

3.4.11. տրամադրել Պատվերում նշված ժամկետով երաշխիք, բայց ոչ պակաս, քան իր կողմից կատարված Աշխատանքների արդյունքի համար առնվազն 1 (մեկ) տարվա, իսկ փոփոխված պահեստամասերի (դետալների, ագրեգատների և բաղադրիչների, բացառությամբ ընթացային մասի դետալների) համար՝ դրանց նպատակային նշանակությամբ օգտագործման համար սովորաբար նախատեսվող ժամկետով երաշխիք,

3.4.12. Պատվիրատուի (Ստացողի) պահանջով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները, եթե Կատարողը Աշխատանքների կատարման ընթացքում Պայմանագրի պայմաններից թույլ է տվել շեղումներ, որոնք վատթարացրել են Աշխատանքների որակը,

3.4.13. վերանորոգման իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ բանկային, ապահովագրական, առևտրային, բժշկական կամ այլ գաղտնիք, անձնական տվյալներ պարունակող կամ ցանկացած այլ տեղեկությունները, փաստաթղթերը, էլեկտրոնային ֆայլերը օգտագործել բացառապես Պատվերով նախատեսված վերանորոգման իրականացման նպատակով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև երբևէ չհրապարակել կամ երրորդ անձանց չփոխանցել կամ որևէ այլ կերպ երրորդ անձանց հասանելի չդարձնել այդ տեղեկությունները, փաստաթղթերը և էլեկտրոնային ֆայլերը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

3.4.14. լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքով հատուցել իր կողմից Աշխատանքների կատարումից բխող՝ Պատվիրատուին և (կամ) Ստացողին (հատուցում ստանալու իրավունք ունեցող անձին) պատճառված վնասները,

3.4.15. մշտապես ունենանալ Պայմանագրի 3.4.14-րդ կետով նախատեսված պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր, որով որպես մեկ ապահովագրական պատահարի (մեկ ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգմամբ պատճառված վնասի) համար ապահովագրական գումարի չափ սահմանված է առնվազն ԱՊՊԱ պատահարի

հետևանքով մեկ տուժողի գույքին պատճառված վնասների գծով վճարման ենթակա առավելագույն հատուցման չափը,

3.4.16. Պատվիրատուին տրամադրել և առաջին իսկ փոփոխության դեպքում թարմացնել յուրաքանչյուր տեսակի վնասի գծով Աշխատանքների գնացուցակը (մարդ/ժամ ստանդարտով) և այդ գների գործողության (հասանելի լինելու) ժամկետները, ինչպես նաև Պատվեր ստանալիս պարտադիր հիմնվել բացառապես այդ գնացուցակի վրա: (լրաց. է 24/09/2019թ թիվ 37-Լ)

4. Աշխատանքների կատարման ժամկետը

4.1. Կատարողը պարտավոր է Աշխատանքների կատարումն սկսել Պայմանագրի 2.3-րդ կետով սահմանված ձևով լրացված Պատվերն ստանալուց հետո՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.2. Կատարողը պարտավոր է Աշխատանքները կատարել Պատվերում նշված ժամկետում, որը չի կարող գերազանցել՝

4.2.1. 10 (տասը) աշխատանքային օրը, եթե Աշխատանքների գինն ըստ նախահաշվի չի գերազանցում 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը,

4.2.2. 1 (մեկ) ամիսը, եթե եթե Աշխատանքների գինն ըստ նախահաշվի գերազանցում է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը:

4.3. Պատվերում նշված ժամկետը կարող է գերազանցել Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված համապատասխան ժամկետը մինչև 15 (տասնհինգ) աշխատանքային օրով, եթե Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ որևէ դետալ, ագրեգատ կամ բաղադրիչ Հայաստանի Հանրապետության համանման դետալների, ագրեգատների կամ բաղադրիչների ձեռքբերման շուկայում բացակայում է, և անհաժեշտություն է առաջացել տվյալ դետալը, ագրեգատը կամ բաղադրիչը ներկրել օտարերկրյա պետությունից:

5. Կատարողի վարձատրության սկզբունքներն ու վճարման ժամկետները

5.1. Աշխատանքների գինը որոշվում է Կատարողի կողմից Պայմանագրի 3.4.5-րդ կետի համաձայն ներկայացրած նախահաշվի հիման վրա:

5.2. Պայմանագրի 5.1-րդ կետով նշված նախահաշվի հիման վրա որոշվող Աշխատանքների գինը չի կարող գերազանցել տվյալ շուկայում ձևավորված համանման վերանորոգման աշխատանքների պատշաճ կատարման համար սովորաբար գանձվող գինը:

5.3. Պատվիրատուն պարտավոր է Պայմանագրի 5.1-րդ կետով սահմանված գինը Կատարողին վճարել Պայմանագրի 1.4-րդ կետով սահմանված ակտը և հարկային հաշիվը ստորագրելուց (հաստատելուց) հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ համապատասխան գումարը փոխանցելով Կատարողի՝ հարկային հաշվում նշված բանկային հաշվին:

6. Կողմերի պարտասխանատվությունը

6.1. Պայմանագրի 4-րդ կետում նշված Աշխատանքների կատարման ինչպես սկզբնական, այնպես էլ վերջնական ժամկետների, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված թերությունների վերացման ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել վճարել տուգանք՝ Աշխատանքների գնի 1 (մեկ) տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Աշխատանքների գնի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:

6.2. Պայմանագրի 5.3-րդ կետում նշված Աշխատանքների գնի վճարման ժամկետի խախտման դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել վճարել տուգանք՝ Աշխատանքների գնի 1 (մեկ) տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Աշխատանքների գնի չվճարված մասի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:

6.3. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և (կամ) մյուս կողմին պատճառված վնասի հատուցման պարտավորությունը կատարելուց, ինչպես նաև չի զրկում Կողմերին համապատասխան խախտման համար Պայմանագրով սահմանված այլ իրավունքների իրականացման պահանջ ներկայացնելու հնարավորությունից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2. Այն կողմը, որի պարտավորությունների կատարման վրա ազդել է Պայմանագրի 7.1-րդ կետով նախատեսված հանգամանքը, պարտավոր է այդ մասին առաջին իսկ հնարավորության դեպքում գրավոր ծանուցել մյուս կողմին: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես՝ 10 (տասը) օր առաջ, տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Պայմանագրի գործողության ժամկետը և պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու հիմքերն ու կարգը

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով: Պայմանագրի գործողությունը դադարում է օրենքով և Պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով: Ընդ որում, Պայմանագիրը դադարելու դեպքում չի դադարում Կատարողի՝ Պայմանագրի 3.4.13-րդ կետով նախատեսված պարտականությունը, որը գործում է անժամկետ: Կատարողը հայտնում է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը, որ այդ պարտականությունը գործում է անորոշ ժամկետով:

8.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից մեկի պահանջով՝ այդ մասին լուծման օրվանից առնվազն 1 (մեկ) ամիս առաջ մյուս կողմին գրավոր ծանուցելով:

9. Կողմերի միջև հաղորդակցման կարգը

9.1. Կողմերի միջև Պայմանագրով նախատեսված հաղորդակցությունը (փաստաթղթաշրջանառությունը)՝ Պատվերների, նախահաշիվների, ծանուցումների և այլ գրությունների ու փաստաթղթերի (այսուհետ՝ Փաստաթուղթ) ուղարկումը (հանձնումը), իրականացվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

9.2. իրավասու անձանց կողմից Փաստաթղթի ստորագրված և սքանավորված, ինչպես նաև կցվող բոլոր փաստաթղթերի/նյութերի սքանավորված և/կամ էլեկտրոնային տարբերակը ուղարկող կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեից ստացող կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով, բացառությամբ Պատվերի, որը կարող է Պատվիրատուի էլեկտրոնային հասցեից ուղարկվել նաև չստորագրված և չսքանավորված վիճակում (միայն էլեկտրոնային ֆայլ),

9.3. իրավասու անձանց կողմից Փաստաթղթի էլեկտրոնային ստորագրված տարբերակը ուղարկող կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեից ստացող կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու կամ դրա համար հատուկ ստեղծված էլեկտրոնային միջավայրում տեղադրելու միջոցով,

9.4. Պայմանագրի 9.2-րդ և 9.3-րդ կետերով սահմանված եղանակների անհնարինության դեպքում՝ Փաստաթուղթը թղթային ձևով մյուս Կողմի իրավասու անձին հանձնման մասին ստորագրությամբ հանձնելու միջոցով:

9.5. Կողմերը Պայմանագրի 9.1-րդ կետով սահմանված եղանակներով միմյանց հայտնում են իրենց անունից Փաստաթղթեր ուղարկելու (հանձնելու) և դրանք ստորագրելու իրավասություն ունեցող անձանց տվյալները և փոփոխությունները, եթե փաստաթուղթ ուղարկողը կամ ստորագրողը չի հանդիսանում կողմի գործադիր մարմնի ղեկավար:

9.6. Պայմանագրի 9.2-րդ կետով սահմանված եղանակը կարող են կիրառվել միայն Կողմերի՝ Պայմանագրի նշված կետը կիրառելու լրացուցիչ գրավոր համաձայնության առկայության դեպքում: Ընդ որում՝ նման դեպքում Կողմերը պարտադիր միմյանց տրամադրում են այդ միջավայրի տվյալները և հայտնում այդ միջավայրից Փաստաթղթի արտահանման կարգը:

9.7. Անհրաժեշտություն դեպքում Կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմի պահանջով 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում այդ կողմին է տրամադրում Պայմանագրի 9.1-րդ կետի համաձայն այդ կողմին ներկայացված Փաստաթղթի բնօրինակը:

10. Այլ պայմաններ

10.1. Պայմանագրի ստորագրմամբ Կատարողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներին իր համապատասխանությունը՝ ներառյալ իր որակավորման համար դիմումին կից ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև իր կողմից Բյուրոյի կանոններով սահմանված պարտականությունների պահպանումն ստուգելու նպատակով Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկն իրականացնի իր կանոններով սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ ներառյալ իր մոտ ստուգումներ և ուսումնասիրություններ և այլ անձանցից ու մարմիններից ստանա իր վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր:

10.2. Պայմանագրի ստորագրմամբ կատարողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով Բյուրոյի կողմից իր նկատմամբ կիրառվեն Բյուրոյի կանոններով նախատեսված կարգապահական պատասխանատվության (ներառյալ՝ ֆինանսական բնույթի) միջոցներ՝ պարտավորվելով սահմանված կարգով կրել դրանք (ներառյալ՝ Բյուրոյին վճարել սահմանված տուժանքները):

10.3. Պայմանագրի փոփոխություններում և/կամ լրացումներում Պայմանագրով սահմանված պայմաններին հակասող կամ Կատարողի՝ Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարմանը կամ իրավունքների իրականացմանը խոչընդոտող այլ պայմաններ նախատեսված լինելու դեպքում այդ պայմանները Պայմանագրին հակասող (խոչընդոտող) մասով չեն գործում, գործում են Պայմանագրով սահմանված պայմանները:

10.4. Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.5. Պայմանագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

10.6. Պայմանագրի բոլոր հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

11. Վեճերի լուծման կարգը

11.1 Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ մեկ ամսվա ընթացքում: Սույն կետում նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Կողմերի հասցեները, այլ վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Կատարող

Տվյալները, ստորագրությունը

Տվյալները, ստորագրությունը

Հավելված 2

«_____» _____, 20__թ. կնքված
ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման թիվ _____ պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

	Փոխվող դետալների (ազրեգատների) անվանումը	Գործարանային, ոչ գործարանային, օգտագործված	Քանակ (հատ)	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)
1.					
2.					
...					
Ընդամենը				(-----)	ՀՀ դրամ
	Վերանորոգվող դետալների (ազրեգատների) անվանումը	Քանակ (հատ)	Միավոր արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)	
1.					
2.					
...					
Ընդամենը				(-----)	ՀՀ դրամ
	Օգտագործվող նյութերի անվանումը	Քանակ (չափման միավոր)	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)	
1.					
2.					
...					
Ընդամենը				(-----)	ՀՀ դրամ
Հավանական լրացուցիչ այլ ծախսեր				(-----)	ՀՀ դրամ
Վերանորոգման աշխատանքների արժեք				(-----)	ՀՀ դրամ
Ընդամենը՝ (վերանորոգման ընդհանուր ծախսերը)				(-----)	ՀՀ դրամ

Վերանորոգող կազմակերպության ղեկավար (իրավասու անձ)՝

անուն, ազգանուն, ստորագրություն,

Կ.Տ.

Հավելված 5.2

«ԱՊՊԱ ոլորտում փորձագետների և վերանորոգող կազմակերպությունների որակավորման» RL 1-003 կանոնների

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻՑ ԲԱՑԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԹԻՎ-_____

Ստորագրման վայրը

Ստորագրման ամսաթիվը

«_____» _____ (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս _____-ի, ով գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____-ը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս _____-ի, ով գործում է _____ հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Պատվիրատուն և Կատարողը միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին՝

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի կողմից Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ձևով տրված պատվերի (այսուհետ՝ Պատվեր) հիման վրա կատարել ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի հետևանքով Պայմանագրի 1.2-րդ կետում նշված գույքին պատճառված վնասների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ) և դրանց արդյունքները Պայմանագրով սահմանված ժամկետում հանձնել Պատվիրատուին (Պատվերում նշված ստացողին (այսուհետ՝ Ստացող)), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Պայմանագրով նախատեսված կարգով և Պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքների արդյունքը և Պայմանագրով սահմանված ժամկետներում, կարգով և չափով վճարել Աշխատանքների գինը:

1.2. Պատվերով Կատարողին կարող են առաջադրվել ապահովագրական պատահարի հետևանքով հետևյալ գույքին (դրանցից մեկին կամ մի քանիսին) պատճառված վնասների վերանորոգման Աշխատանքների կատարումը՝

1.2.1. _____,

1.2.2. _____,....:

1.3. Կատարողը պարտավորվում է Աշխատանքները կատարել անձամբ, իր ուժերով, սարքավորումներով և նյութերով և կրում է պատասխանատվություն Պատվիրատուի

առջև՝ Աշխատանքների արդյունքի համար՝ ՀՀ օրենսդրությանը և Պայմանագրին համապատասխան:

1.4. Պայմանագրի համաձայն՝ Աշխատանքները համարվում են կատարված Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) կանոններով սահմանված հանձնման-ընդունման ակտը Ստացողի, Պատվիրատուի և Կատարողի կողմից եռակողմ ստորագրվելու պահից: Ընդ որում, Ստացողի կողմից հանձնման-ընդունման ակտը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում անհիմն չստորագրվելու կամ ստորագրումից խուսափելու դեպքում նշված ակտը համարվում է նրա կողմից ստորագրված:

2. Պատվեր տրամադրություններ

2.1. Աշխատանքների կատարման անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն լրացնում է Պատվերի մինչև 2-րդ կետը ներառյալ և այն ներկայացնում Կատարողին: Ստանալով Պատվերի նախագիծը, Կատարողը 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում լրացնում է Պատվերի 3-րդ կետը և այն ներկայացնում Պատվիրատուին:

2.2. Եթե Կատարողի առաջարկած ժամկետներն ընդունելի չեն, ապա Պատվիրատուն 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշում է կատարում Պատվերի 4-րդ կետի «Պատվերը համարել չտրված» դաշտում և այն ստորագրությամբ ուղարկում է Կատարողին: Սույն կետում նշված դեպքում Պատվերը համարվում է Կատարողին չտրված, և դրա գծով Պայմանագրով նախատեսված հետագա փոխհարաբերությունները չեն առաջանում:

2.3. Եթե Կատարողի առաջարկած ժամկետները ընդունելի են, ապա Պատվիրատուն 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում լրացնում է Պատվերի 5-րդ կետը, նշում է կատարում Պատվերի 4-րդ կետի «Պատվերը համարել տրված» դաշտում և այն ստորագրությամբ (Պատվերի 6-րդ կետ) ուղարկում է Կատարողին: Սույն կետում նշված դեպքում Պատվերը համարվում է Կատարողին տրված, և դրա գծով Կողմերի միջև առաջանում են Պայմանագրով նախատեսված հետագա փոխհարաբերությունները:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրով և Պայմանագրով իրեն վերապահված բոլոր իրավունքները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով վճարել Աշխատանքների գինը,

3.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կատարողի և Ստացողի մասնակցությամբ գննել և ընդունել Պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքները (դրա արդյունքը), իսկ Պայմանագրից՝ Աշխատանքների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքներում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1. իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և Պայմանագրով իրեն վերապահված բոլոր իրավունքները:

3.4. Կատարողը պարտավոր է՝

3.4.1. Աշխատանքները կատարել պատշաճ որակով՝ Պատվիրատուի կանոններով՝ ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող այլ գույքին պատճառված վնասի հաշվարկվման կարգին և մեթոդաբանությանը, այլ կարգավորումներին համաձայն, որոնք հրապարակված են Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում,

3.4.2. գույքի վերանորոգում իրականացնել բացառապես Պայմանագրով սահմանված ձևով տրված Պատվերի հիման վրա,

3.4.3. Պատվերը ստանալուց հետո՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, Պայմանագրի Հավելված 2-ով սահմանված ձևով կազմել և Պատվիրատուին ներկայացնել Պատվերում նշված Աշխատանքների կատարման նախահաշիվը,

3.4.4. համապատասխան պահանջի առկայությամբ՝ ողջամիտ սեղմ ժամկետում Պատվիրատուին և (կամ) Բյուրոյին տրամադրել վերանորոգման գործընթացին վերաբերող փաստաթղթեր և հիմնավորումներ,

3.4.5. իր կողմից կատարված վերանորոգումների գծով ցանկացած գործընթացների շրջանակներում համապատասխան պահանջի առկայությամբ մասնակցել և հիմնավորել իր կողմից կատարված վերանորոգման անհրաժեշտությունը և դրա հետ կապված ծախսերը,

3.4.6. առանց Պատվիրատուի ներկայացուցչի չիրականացնել վերանորոգման հետ կապված խնդիրների քննարկումներ, ճշտումներ և ցանկացած պարզաբանումներ տուժողի, նրա ներկայացուցչի կամ իրավահաջորդի, ապահովադրի կամ ապահովագրված անձի հետ,

3.4.7. պատշաճ կերպով իր մոտ պահել և նույն վիճակում Ստացողին հետ վերադարձնել փոփոխման ենթակա կամ փոփոխված բաղադրիչները,

3.4.8. տրամադրել Պատվերում նշված ժամկետով երաշխիք, բայց ոչ պակաս, քան իր կողմից կատարված Աշխատանքների արդյունքի համար առնվազն 1 (մեկ) տարվա, իսկ փոփոխված բաղադրիչների մասով՝ դրանց՝ նպատակային նշանակությամբ օգտագործման համար սովորաբար նախատեսվող ժամկետով երաշխիք,

3.4.9. Պատվիրատուի (Ստացողի) պահանջով 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում անհատույց վերացնել բոլոր բացահայտված թերությունները, եթե Կատարողը Աշխատանքների կատարման ընթացքում Պայմանագրի պայմաններից թույլ է տվել շեղումներ, որոնք վատթարացրել են Աշխատանքների որակը,

3.4.10. վերանորոգման իրականացման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ բանկային, ապահովագրական, առևտրային, բժշկական կամ այլ գաղտնիք, անձնական տվյալներ պարունակող կամ ցանկացած այլ տեղեկությունները, փաստաթղթերը, էլեկտրոնային ֆայլերը օգտագործել բացառապես Պատվերով նախատեսված վերանորոգման իրականացման նպատակով՝ «Օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև երբևէ չհրապարակել կամ երրորդ անձանց չփոխանցել կամ որևէ այլ կերպ երրորդ անձանց հասանելի չդարձնել այդ տեղեկությունները, փաստաթղթերը և էլեկտրոնային ֆայլերը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

3.4.11. լրիվ ծավալով պատասխանատվության սկզբունքով հատուցել իր կողմից Աշխատանքների կատարումից բխող՝ Պատվիրատուին և (կամ) Ստացողին (հատուցում ստանալու իրավունք ունեցող անձին) պատճառված վնասները,

3.4.12. մշտապես ունենանալ Պայմանագրի 3.4.11-րդ կետով նախատեսված պատասխանատվության ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագիր (պայմանագրեր), որով որպես մեկ ապահովագրական պատահարի (մեկ ավտոտրանսպորտային միջոցի վերանորոգմամբ պատճառված վնասի) համար ապահովագրական գումարի չափ սահմանված է առնվազն ԱՊՊԱ պատահարի հետևանքով մեկ տուժողի գույքին պատճառված վնասների գծով վճարման ենթակա առավելագույն հատուցման չափը:

4. Աշխատանքների կատարման ժամկետը

4.1. Կատարողը պարտավոր է Աշխատանքների կատարումն սկսել Պայմանագրի 2.3-րդ կետով սահմանված ձևով լրացված Պատվերն ստանալուց հետո՝ 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.2. Կատարողը պարտավոր է Աշխատանքները կատարել Պատվերում նշված ժամկետում, որը չի կարող գերազանցել՝

4.2.1. 10 (տասը) աշխատանքային օրը, եթե Աշխատանքների գինն ըստ նախահաշվի չի գերազանցում 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը,

4.2.2. 1 (մեկ) ամիսը, եթե եթե Աշխատանքների գինն ըստ նախահաշվի գերազանցում է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը:

4.3. Պատվերում նշված ժամկետը կարող է գերազանցել Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված համապատասխան ժամկետը մինչև 15 (տասնհինգ) աշխատանքային օրով, եթե Աշխատանքների կատարման համար անհրաժեշտ որևէ բաղադրիչ

Հայաստանի Հանրապետության համանման բաղադրիչների ձեռքբերման շուկայում բացակայում է, և տվյալ բաղադրիչը ներկրվում է օտարերկրյա պետությունից:

5. Կատարողի վարձատրության սկզբունքներն ու վճարման ժամկետները

5.1. Աշխատանքների գինը որոշվում է Կատարողի կողմից Պայմանագրի 3.4.3-րդ կետի համաձայն ներկայացրած նախահաշվի հիման վրա:

5.2. Պայմանագրի 5.1-րդ կետով նշված նախահաշվի հիման վրա որոշվող Աշխատանքների գինը չի կարող գերազանցել տվյալ շուկայում ձևավորված համանման վերանորոգման աշխատանքների պատշաճ կատարման համար սովորաբար գանձվող գինը:

5.3. Պատվիրատուն պարտավոր է Պայմանագրի 5.1-րդ կետով սահմանված գինը Կատարողին վճարել Պայմանագրի 1.4-րդ կետով սահմանված ակտը և հարկային հաշիվը ստորագրելուց (հաստատելուց) հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ համապատասխան գումարը փոխանցելով Կատարողի՝ հարկային հաշվում նշված բանկային հաշվին:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Պայմանագրի 4-րդ կետում նշված Աշխատանքների կատարման ինչպես սկզբնական, այնպես էլ վերջնական ժամկետների, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված թերությունների վերացման ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել վճարել տուգանք՝ Աշխատանքների գնի 1 (մեկ) տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Աշխատանքների գնի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:

6.2. Պայմանագրի 5.3-րդ կետում նշված Աշխատանքների գնի վճարման ժամկետի խախտման դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել վճարել տուգանք՝ Աշխատանքների գնի 1 (մեկ) տոկոսի չափով, և տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար Աշխատանքների գնի չվճարված մասի 0.2 (զրո ամբողջ երկու տասնորդական) տոկոսի չափով:

6.3. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում Պայմանագրով ստանձնած պարտավորությունները և (կամ) մյուս կողմին պատճառված վնասի հատուցման պարտավորությունը կատարելուց, ինչպես նաև չի զրկում Կողմերին համապատասխան խախտման համար Պայմանագրով սահմանված այլ իրավունքների իրականացման պահանջ ներկայացնելու հնարավորությունից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

7.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2. Այն կողմը, որի պարտավորությունների կատարման վրա ազդել է Պայմանագրի 7.1-րդ կետով նախատեսված հանգամանքը, պարտավոր է այդ մասին առաջին իսկ հնարավորության դեպքում գրավոր ծանուցել մյուս կողմին: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես՝ 10 (տասը) օր առաջ, տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Պայմանագրի գործողության ժամկետը և պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու հիմքերն ու կարգը

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով: Պայմանագրի գործողությունը դադարում է օրենքով և Պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով: Ընդ որում, Պայմանագիրը դադարելու դեպքում չի դադարում Կատարողի՝ Պայմանագրի 3.4.10-րդ կետով նախատեսված պարտականությունը, որը գործում է անժամկետ: Կատարողը հայտնում է իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը, որ այդ պարտականությունը գործում է անորոշ ժամկետով:

8.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից մեկի պահանջով՝ այդ մասին լուծման օրվանից առնվազն 1 (մեկ) ամիս առաջ մյուս կողմին գրավոր ծանուցելով:

9. Կողմերի միջև հաղորդակցման կարգը

9.1. Կողմերի միջև Պայմանագրով նախատեսված հաղորդակցությունը (փաստաթղթաշրջանառությունը)՝ Պատվերների, նախահաշիվների, ծանուցումների և այլ գրությունների ու փաստաթղթերի (այսուհետ՝ Փաստաթուղթ) ուղարկումը (հանձնումը), իրականացվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

9.1.1. իրավասու անձանց կողմից Փաստաթղթի ստորագրված և սքանավորված, ինչպես նաև կցվող բոլոր փաստաթղթերի/նյութերի սքանավորված և/կամ էլեկտրոնային տարբերակը ուղարկող կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեից ստացող կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով, բացառությամբ Պատվերի, որը կարող է Պատվիրատուի էլեկտրոնային հասցեից ուղարկվել նաև չստորագրված և չսքանավորված վիճակում (միայն էլեկտրոնային ֆայլ),

9.1.2. իրավասու անձանց կողմից Փաստաթղթի էլեկտրոնային ստորագրված տարբերակը ուղարկող կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեից ստացող կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու կամ դրա համար հատուկ ստեղծված էլեկտրոնային միջավայրում տեղադրելու միջոցով,

9.1.3. Պայմանագրի 9.1.1-րդ և 9.1.2-րդ կետերով սահմանված եղանակների անհնարինության դեպքում՝ Փաստաթուղթը թղթային ձևով մյուս Կողմի իրավասու անձին հանձնման մասին ստորագրությամբ հանձնելու միջոցով:

9.2. Կողմերը Պայմանագրի 9.1-րդ կետով սահմանված եղանակներով միմյանց հայտնում են իրենց անունից Փաստաթղթեր ուղարկելու (հանձնելու) և դրանք ստորագրելու իրավասություն ունեցող անձանց տվյալները և փոփոխությունները, եթե փաստաթուղթ ուղարկողը կամ ստորագրողը չի հանդիսանում կողմի գործադիր մարմնի ղեկավար:

9.3. Պայմանագրի 9.1.2-րդ կետով սահմանված եղանակը կարող են կիրառվել միայն Կողմերի՝ Պայմանագրի նշված կետը կիրառելու լրացուցիչ գրավոր համաձայնության առկայության դեպքում: Ընդ որում՝ նման դեպքում Կողմերը պարտադիր միմյանց տրամադրում են այդ միջավայրի տվյալները և հայտնում այդ միջավայրից Փաստաթղթի արտահանման կարգը:

9.4. Անհրաժեշտություն դեպքում Կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմի պահանջով 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում այդ կողմին է տրամադրում Պայմանագրի 9.1-րդ կետի համաձայն այդ կողմին ներկայացված Փաստաթղթի բնօրինակը:

10. Այլ պայմաններ

10.1. Պայմանագրի ստորագրմամբ Կատարողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով և (կամ) սույն պայմանագրով սահմանված պահանջներին իր համապատասխանությունը՝ ներառյալ իր կողմից Բյուրոյի կանոններով սահմանված պարտականությունների պահպանումն ստուգելու նպատակով Բյուրոն կամ ՀՀ կենտրոնական բանկն իրականացնի իր կանոններով սահմանված վերահսկողական միջոցառումներ՝ ներառյալ իր մոտ ստուգումներ և ուսումնասիրություններ և այլ անձանցից ու մարմիններից ստանա իր վերաբերյալ տեղեկություններ և փաստաթղթեր:

10.2. Պայմանագրի ստորագրմամբ կատարողն իր համաձայնությունն է տրամադրում առ այն, որպեսզի Բյուրոյի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով Բյուրոյի կողմից իր նկատմամբ կիրառվեն Բյուրոյի կանոններով նախատեսված կարգապահական պատասխանատվության (ներառյալ՝ ֆինանսական բնույթի) միջոցներ՝ պարտավորվելով սահմանված կարգով կրել դրանք (ներառյալ՝ Բյուրոյին վճարել սահմանված տուժանքները):

10.3. Պայմանագրի փոփոխություններում և/կամ լրացումներում կամ Կողմերի միջև կնքված այլ պայմանագրով Պայմանագրով սահմանված պայմաններին հակասող կամ Կատարողի՝ Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարմանը կամ իրավունքների իրականացմանը խոչընդոտող այլ պայմաններ նախատեսված լինելու դեպքում այդ պայմանները Պայմանագրին հակասող (խոչընդոտող) մասով չեն գործում, գործում են Պայմանագրով սահմանված պայմանները:

10.4. Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.5. Պայմանագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

10.6. Պայմանագրի բոլոր հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

11. Վեճերի լուծման կարգը

11.1 Պայմանագրի կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ մեկ ամսվա ընթացքում: Սույն կետում նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Կողմերի հասցեները, այլ վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Կատարող

Տվյալները, ստորագրությունը

Տվյալները, ստորագրությունը

Հավելված 2

«_____» _____, 20____թ. կնքված ավտոտրանսպորտային միջոցից բացի այլ

ՆԱԽԱՀԱՇԻՎ

	Փոխվող բաղադրիչի անվանում	քանակ (հատ)	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)
1.				
2.				
...				
Ընդամենը				(-----) ՀՀ դրամ
	Վերանորոգվող բաղադրիչի անվանումը	քանակ(հատ)	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)
1.				
2.				
...				
Ընդամենը				(-----) ՀՀ դրամ
	Օգտագործվող նյութերի անվանումը	Քանակ (չափման միավոր)	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեք (ՀՀ դրամ)
1.				
2.				
...				
Ընդամենը				(-----) ՀՀ դրամ
	Հավանական լրացուցիչ այլ ծախսեր			(-----) ՀՀ դրամ
1.				
Վերանորոգման աշխատանքների արժեք				(-----) ՀՀ դրամ
Ընդամենը՝ (վերանորոգման ընդհանուր ծախսերը)				(-----) ՀՀ դրամ

Վերանորոգող կազմակերպության ղեկավար (իրավասու անձ)՝

« ____ » _____, 20 ____ թ. կնքված գույքի վերանորոգման թիվ _____ պայմանագրի

Պատվերի ամսաթիվը	որ	ամիս	տարի
Պատվերի համարը			
Վերանորոգող կազմակերպություն	(անվանումը)		

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՎԵՐ

1. Հենքային տվյալներ				
1.1.	Պատվիրատու	(նշվում է պատվիրատուի անվանումը)		
1.2.	Պատվիրատուի և կատարողի (Կողմեր) միջև կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը	համարը	որ	ամիս տարի
1.3.	Վերանորոգման ենթակա գույքի վերաբերյալ տվյալներ	նույնականացնող տվյալները		
1.4.	Փորձագիտական եզրակացության համարը և ամսաթիվը (կցված է պատվերին)	համարը	որ	ամիս տարի
2. Կատարման ենթակա աշխատանքների բնույթը և վնասվածքների մանրամասն նկարագիրը (առկայության)		Համաձայն սույն պատվերի 1.4-րդ կետում նշված փորձագիտական եզրակացության		
3. Կատարողի նշումներ մաս				
3.1	Վերանորոգման ժամանակահատվածը	սկիզբը	որ	ամիս տարի
		ավարտը	որ	ամիս տարի
3.2	Երաշխիքային ժամկետները՝ ըստ դետալների (ըստ դետալների նշվում է անհրաժեշտության դեպքում)			
	1.	դետալի անվանումը	որ	ամիս տարի
	2	դետալի անվանումը	որ	ամիս տարի
	...	դետալի անվանումը	որ	ամիս տարի
4. Պատվիրատուի կողմից պատվերի ընդունման կարգավիճակը				
<input type="checkbox"/> պատվերը համարել տրված				
<input type="checkbox"/> պատվերը համարել չտրված				
5. Ստացող (իրավասու անձ)		(անունը և ազգանունը, անվանումը)		
6. Պատվիրատու (իրավասու անձ)		(անունը և ազգանունը, անվանումը)		(ստորագրություն)